



ԹԵՇՎԱՐ
ԳՐԸՆԿԱՆ
ՏԻՒՐԿԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ

Ա. ՄԱՆԱԽԵՑԱՆ

ՃԻՆԱՆՅՈՒԹԵՐԻ
ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

69
5-2
4

-8

1934

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՄԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ
Է Մ Բ Ե Վ Ա Ն

25 SEP 2010

Ա Հ Գ Ե Տ Հ Ա Տ Ի Գ Բ Տ Ա Կ Ա Ն - Տ Ե Խ Ն Ի Կ Ա Կ Ա Ն Գ Ր Ա Դ Ա Ր Ա Ն - Ն 1

69

5-24

Ա. Մ Ա Ն Ա Դ Յ Ա Ն

Շ Ի Ա Ա Ց Ո Ւ Թ Ե Ր Ի

Հ Ա Տ Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Խ Ն Ե Ր Ը

1008
5552

Պ Ե Տ Ա Կ Ա Ն Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Խ

Յ Ե Ր Ե Վ Ա Ն

1 9 3 4



Պատ. Խմբագիր Արտ Խանջյան
Տել. Խմբագիր Գ. Զենյան
Մրցագր. Ա. Տ. Մկրտչյան

Հրատ. № 2893.
Դրամ. 8461 (թ), Տիրաժ 2000.
Պատվ. № 150
Կուտառափ սպառան

Հանձնված և արտադրության 28 վերաք. 1934 թ.
Խմբագրված և սպառան 22 մայիսի 1934 թ.

Ա. Ռ. Ա. Զ. Ա. Բ. Ա. Ն

Հայերեն տեխնիկական գրականությունը չափաղանց աղքատ է: Մանավանդ խոշոր ե այդ գրականության կարիքը բարձրագույն և միջնակարգ մասնագիտական դպրոցներում, վորտեղ ուսանողության զգալի մասը չի տիրապետում ուսուերեն և ոտար լեզուներին և անկարող ե ոդավել այդ լեզուներով հրատարակված գրականությունից:

Հրատարակելով «Եինարարական նյութեր»-ի ձեռնարկը մասմաս առանձին պրակիներով, մենք նպատակ ենք գնում զեթմասմբ ու աստիճանաբար բավարարել այդ առարկայի նկատմամբ և. Հ.-ի բարձրագույն մասնագիտական դպրոցներում զգացվող սուր կարիքը: Ասում ենք մասմբ, վորովհետեւ այդ նյութի ծավալը չափաղանց մեծ է, և այն ուսանողները, վորկուղենան խորանալ շինանյութերին վերաբերող այս կամ այն խնդրի մեջ, պետք ե դիմեն այդ խնդիրների վերաբերմամբ հրատարակված մասնագիտական գրականության ոգնությանը:

Ձեռնարկի մեջ մենք աշխատել ենք տալ ամփոփ գործնական տեղեկություններ ներկայում գործադրություն ունեցող բոլոր շինարարական նյութերի մասին, ավելի մանրամասն կանգ առնելով այն շինանյութերի վրա, վորոնք տեղական ծագում ունեն և Խորհրդային Հայաստանի շինարարության մեջ ունեն գործնական նշանակություն:

Անհրաժեշտ ենք գտնում նշել վոր յեթե ընդհանուր նշանակություն ունեցող շինարարական նյութերին վերաբերող ուսումնասիրությունները բազմակողմանի և բազմաթիվ են, ընդհակառակը՝ Խորհրդային Հայաստանի տեղական ծագումն ունեցող շինանյութերը դեռևս շատ քիչ են ուսումնասիրված: Իսկ յեղած ուսումնասիրությունները դեռևս հրատարակված չեն: Յեղած նյութերն ըստ հնարավորին լայն ընդգրկելու նպատակով մենք աշխատել ենք ոդավագործել այն անտիպ գիտահետազոտական տվյալները, վորոնք գտնվում են Ծանր արդյունաբերության ժողկոմատի և Լեռնային բաժնի տրամադրության տակ:

Անշուշտ այդ տվյալները չեն կարող տալ շինանյութերի ուսումնասիրության լրիվ պատկերը և հետագայում հետզհետե պետք ե լրացվեն նոր ուսումնասիրությունների միջոցով:

Չեռնարկին գործնական բնույթ տալու նկատառությունը՝ մենք աշխատել ենք լուսաբանել շինարարական նյութերի գործադրությունը տեխնիկական և տնտեսական նպատակահարմարության տեսակետից: Վորագեսզի մեր ձեռնարկով ոգտվող ամեն մեկը կարողանա խորանալ իրեն հետաքրքրող այս կամ այն ինդրի մեջ, ներքեր մենք տալիս ենք տվյալ նյութին, վերաբերող մեզ հայտնի ներկա գրականության ցուցակը, վորով ոգտվել ենք նաև մենք ներկա ձեռնարկի մշակումը կատարելիս: Մեզանում, իբրև առաջին փորձերից մեկը, մշակված մասնագիտական տերմինոլոգիայի բացակայության պայմաններում, անշուշտ գիրքը գերծ չի պակասություններից: Մենք շատ ջնորհակալ կլինենք, յեթե լեզվին ծանոթ կարող անձինք ցույց տային նկատված թերությունները, վորագեսզի հետագա հրատարակության դեպքում կարելի լիներ համապատասխան ուղղություններ մտցնել:

Գրքի մեջ՝ ընդունված են բառերի հետեւալ կրճատությունները.

Դրամ — գր
Կիլոգրամ — կիլ
սանտիմետր — սմ
միլիմետր — մմ
կալորի — կալ
քառակուսի — քառ
խորանարդ — խոր

ՇԻՆԱՐՈՐՈԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱԿԱՆ Ա. Պ. ԲՅՈՒՐԵՐԵՐ

I. Բնդիմուր գրականուրյուն

- Дементьев К. Г.—Технология строительных материалов
Эвальд В. В.—Строительные материалы
Философов П. С.—Строительные материалы
Лоренц В. Ф.—Руководство по приемке и испытанию строительных материалов
Философов П. С.—Практикум по строительным материалам
Ваврциньок О.—Руководство по испытанию материалов
Скрамтаев Б. Г.—Введение в курс строительных материалов

II. Բնական ժամանակական գաղտնություն

- Числиев Д. Г.—Артикские туфовые строительные лавы
Иванчин-Писарев А. А.—Месторождения Артикской туфовой лавы
Левенец Н. Б.—Механизация добычи Артикского туфа
Левинсон-Лессинг Ф. Ю.—Петрография
Терцаги К.—Инженерная геология. Статья Преклика К.
Техн. иссл. горн. пород

- Кайзер Э.—Краткий курс общей геологии
Малюков Н. П.—Естественные каменные строительные материалы

- Марьиновский—Нерудные ископаемые
Карапашев Н.—Диабаз и базальт

III. Կավալի ժամանակական գաղտնություն

- Будников П. П.—Керамическая технология, ч. I и II
Райс Г.—Глины, их залегание, свойства и применение
Энгельгард С. А.—Строения из трамбованной земли

IV. Կավալի այլուրյուն

- Скрамтаев Б. Г.—Бетоны различных видов
Станкеев Л. М.—Растворы и бетоны

Гайэ И.—Литой бетон и его применение
Марьиновский А.—Производство извести
Будников П. П.—Гипс
Шелягин В. В.—Магнезиальный цемент
Гончаров Б. П.—Магнезиальные строительные материалы

V. Անապահովություն

Кротов Е. Г.—Технология дерева

VI. Նոր սինթետիկ առարկաներ

Копелянский Г. Д.—Новые строительные материалы
Вологодский Б. Ф.—Новые строительные материалы и их применение
Богданов и Петров—Новые строительные материалы
Костырко Е. В.—Новые строительные материалы
Михайлов Р. М.—Пемзовые строительные материалы
Юдинсон П. И.—Рациональные строительные материалы
Розенталь А. А.—Трепельные строительные материалы
Попов Н. А.—Легкобетонные камни и блоки
Михайлов Р. М. и Попов Н. А.—Минеральные заполнители легких бетонов
Брюшков А. А.—Газо и пенобетон
В. Эвальд и Н. Ваганов.—Асбокементное производство
Ф. Н. Кардо-Сысоев и Б. Смоляк.—Применение известково-трепельных растворов
Кистер А. А.—Руководство по укладке бесшовных магнезитовых полов
Воробьев В. А.—Битуминозные кровельные материалы
" Кровельный толь и рувероид

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Շինանյութերի առարկան կիրառական գիտություն ե, վորք նպատակ ե դնում ռևոլուցիոն շինարարական ամեն տեսակի կառուցումների համար գործադրվող նյութերի հատկությունները, փորձարկման գործնական միջոցները և այդ նյութերի ստացման ու գործադրության յեղանակը:

Դորժադրության տեսակետից շինարարական նյութերը բաշխնվում են 3 կարգի:

1. հիմնական շինանյութեր,
2. կապակցող նյութեր,
3. ոժանդակ շինանյութեր:

Իր հերթին հիմնական շինանյութերը լինում են կոնստրուկտիվ և մեկուսիչ:

Առաջին խմբին են պատկանում այն շինանյութերը, վորոնք վերցնում են իրենց վրա կառուցումների ամբողջ ծանրությունը և ապահովում են շենքերի կայունությունը:

Երրրորդ խմբին են պատկանում այն շինանյութերը, վորոնց նպատակն ե պահպանել շենքերի մեջ անհրաժեշտ ջերմությունը և տպահովել շենքերը դրսի խոնավությունից և աղմուկից:

Հիշյալ պայմաններին բավարարելու նպատակով, կոնստրուկտիվ շինանյութերից պահանջվում ե դիմացկանություն և ամբություն: Իսկ մեկուսիչ շինանյութերից պահանջվում ե ջերմության, ձայնի և խոնավության վատ հաղորդականություն:

Ամուր և դիմացկուն են գերազանցորեն այն նյութերը, վորոնք խիստ և ծանր են:

Զերմության և ձայնի մեկուսիչ են այն նյութերը, վորոնց ծավալային կշիռը փոքր ե և իրենք թեթև են:

Որինակ, բազալտը իբրև կոնստրուկտիվ նյութ, վորի

1 խոր մետրը կշռում է 2420—2990 կիլո, տալիս և ժամանակավոր ճնշման ընդդիմալրություն 800—4500 կիլ 1 քառ. մմ վրա, իսկ ջերմանցկության գործակիցը հավասար է 1,47—1,55:

Մինչդեռ պիմզառետոնը, իբրև մեկուսիչ նյութ, վորի 1 խոր մետրը (1:10 հարաբերությամբ) կշռում է 700—950 կիլ, տալիս և ճնշման ընդդիմալրություն 28—40 կիլ 1 քառ. մմ վրա, իսկ ջերմանցկության գործակիցը կազմում է 0,15—0,20:

Այդ յերկու տարրերը, խիտ և ծակոտկեն նյութերի համեմատությունից պարզ կերպով յերկում են նաև նրանց հատկությունների մեջ յեղած խոշոր տարրերությունները:

Շինարարության գործնական պայմաններում չափազանց կարեռ նշանակություն ունի շինանյութերի ընտրությունը:

Ամեն մի առանձին դեպքում պետք են զեկվարվել տվյալնյութի գործադրության տեխնիկական և տնտեսական նպատակարմարությամբ:

Որինակ, այն դեպքում, յերբ քարային շինանյութերից պահանջվում են միմիայն ջերմային մեկուսացում, բազալտի, բետոնի կամ այլ նման բարձրորակ ու թանգարժեք կառուցվածքային նյութերի գործադրությունը պետք են գտնել միանգամայն անպատակահարմար:

Նմանապես աննպատակահարմար պետք են համարել դյուրամաշ տուփ քարի գործադրությունը մայթերի և աստիճանների համար, վորտեղ շինանյութից պահանջվում են շփման ու մաշվելու բարձր ընդդիմալրություն և այլն:

Հնդհանրապես ամեն մի նյութ իր հատկություններով պետք են բավարարի իր գործադրության հիմնական նպատակներին: Բացի այդ, վարովհետև շինանյութերն ըստ իրենց գործադրության ծավալի ունեն չափազանց լայն մասսայական նշանակություն, ուստի նրանք իրենց արժեքով պետք են լինեն եժան և մատչելի:

Ինկատի ունենալով շինանյութերի տեսակների բազմազանությունը, ժամանակակից շինարարական տեխնիկան նպատակ է դնում ամենալայն չափով ոգտագործել նրանց հատկությունները, այդ պատճառով անհրաժեշտ են ուսումնասիրել և իմանալ բոլոր գործադրվող շինանյութերի հատկությունները և ըստ այնմ համապատասխան ընտրություն կատարել:

Սակայն չի կարելի բավականանալ ու կատարել այս կամ

այն նյութի ընտրությունը, հիմք ընդունելով միայն նրա տեսակը:

Որինակ, ամեն տեսակ փայտեղեն նյութ, ամեն տեսակ կիր, ցեմենտ, գաջ, տուփ քար, աղյուս և այլն չեն կարող միենույն հատկություններն ունենալ: Իրենց հատկություններով տարբեր կարող են լինել նույնիսկ միենույն քարհանքից արտարեղված շինարարական քարերը: Խոշոր տարբերություններ կարող են ունենալ միենույն գործարանում, նույն հումույթից ստացվող շինանյութերը:

Որինակ, նույն հումույթի վրա աշխատող՝ ցեմենտի, գաջի կամ կղմինդրի գործարանը, շնորհիվ արտադրական պրոցեսների մեջ յերբեմն առաջացող տարբերությունների, կարող են տալ միանգամայն տարբեր վորակի ու հատկության կիր, ցեմենտ, գաջ կամ կղմինդր: Ուստի, կառուցումների վորակը ապահովելու նկատառումներով, բոլոր կարեռագույն շինանյութերը հատուկ մշակված ստանդարտների միջոցով յինթարկվում են պարտադիր նորմագործական:

Ստանդարտների միջոցով ընորոշվում և նորմագործական են յինթարկվում տվյալ նյութի կարեռ հատկություններին վերաբերող տեխնիկական պայմանները և փորձարկման յեղանակը, վարույթ պարտադիր են թե արտադրողի և թե գործադրողի համար՝ իրեն նյութի ընդունման նախապայմաններ:

Գործնական տեսակետից հիմնական շինանյութերի համար կարեռ են հետեւյալ ընդհանուր հատկությունները.

1. տեսակաբար կշիռ,
2. ծավալային կշիռ,
3. ծակոտկենությունը,
4. ջուր ծծելու ունակությունը կամ ջրահագեցումը,
5. ջրանցքությունը,
6. ջերմանցկությունը,
7. ջերմունակությունը,
8. ձայնանցկությունը,
9. ոգանցկությունը,
10. ջերմային լայնացման աստիճանը,
11. հրակայունությունը,
12. դիմացկանությունը կամ հողմահարման ընդդիմալրությունը,
13. ամրությունը,

14. առածգականությունը յերկաթի և փայտի համար,
 15. կարծրությունը,
 16. մաշվելու աստիճանը կամ մաշվողությունը և
 17. բնական քարային նյութերի համար նաև նրանց
մշակվելու ընդունակությունը և արտաքին տեսքը:

Բացի հիշված մախանիկական և ֆիզիկական հատկություններից, հաճախ անհրաժեշտ ե լինում իմանալ նաև շինանյութերի այն քիմիական հատկությունները, վորոնք կարող են ունենալ այս կամ այն ազդեցությունը նրանց մեխանիկական և ֆիզիկական հատկությունների վրա:

Պետք ե նկատել, վոր շինանյութերի գործադրության դեպքում անհրաժեշտ ե լինում վորոշել և իմանալ նյութերի այն հատկությունները, վորոնք տվյալ նպատակի համար գործնական կարելություն են ստանում: Որինակ՝

1. Սովորական պատերի համար գործադրվող քարերը պետք ե լինեն հողմահարման նկատմամբ դիմացկուն, հեշտ մշակվող, ջերմության վատ հաղորդիչ և իրենց ամրությամբ պետք ե համապատասխանեն տվյալ կառուցվածքի պահանջներին:

2. Հիմքերի համար գործադրվող քարերը պետք ե լինեն հողմահարման նկատմամբ դիմացկուն, վոչ ծակոտկեն և իրենց ամրությամբ պետք ե կարողանան ընդդիմանալ տվյալ կառուցվածքի մեջ գործող ձնչիչ ուժերի ազդեցությանը:

3. Սալահատակման քարերը չպետք ե շուտ մաշվեն և շրման հետևանքով չպետք ե սայթուն վողորկում ստանան:

4. Միջնապատերի համար գործադրություն ստացող շինանյութերը պետք ե լինեն թեթև և ջերմության ու ձայնի վատ հաղորդիչ և այլն:


Ենանյութերի ընտրություն կատարելիս, ինչպես հիշված ե վերևում, բացի նրանց հատկություններից, պետք ե հիմք ընդունել նաև այդ նյութերի արժեքը շինարարության վայրում: Այդ աեսակետից կարենք նշանակություն և ստանում առաջին հերթին շինանյութերի փոխադրության խնդիրը:

Ինկատի առնելով այն հանգամանքը, թե ինչպիսի մեծ քանակությամբ նյութեր ե սպառում շինարարական գործը, դժվար չե տեսնել վոր նյութերի փոխադրության ծախքերն զգալի ազդեցություն են ունենում նրանց ինքնարժեքների վրա:

Բացի այդ, նյութերի փոխադրության խնդիրը հաճախ զգալի չափով բարդացնում ե շինարարական աշխատանքների

կազմակերպումը և անդրադառնում ե կառուցումների ընթացքի վրա, տալով պարապուրդներ, յերբ շինանյութերի գործադրության քանակի և փոխադրական միջոցների կարողության մեջ առաջ ե գալիս վորոշ անհամաշափություն:

Թե ինչպիսի քանակային տարրերություններ կարող են տալ շինանյութերի տարրեր տեսակները փոխադրության տեսակետից, այդ պարզ լեռնում ե ներքեւ տրվող գրաֆիկից. տես նկար 1:



Նկ. 1

Այս գրաֆիկը տալիս է տարրեր նյութերից շինվող 1 հարմետը պատերի կշեռը նույն ջերմային պայմաններում: այլ խոս-

Վերջին տարիների ընթացքում շինարարական նյութերի արդյունաբերական տեխնիկան իր հերթին զգալի աշխատանք ե կատարել այս ուղղությամբ:

Այսպես, որինակ, ծածկի համար գործադրվող յերկաթե թիթեղը փոխարինելու նկատմամբ միաժամանակ արժեքավորումը վոչ թե ինքնամփոփ դրությամբ, այլ գործի մեջ, համարելով կառուցման համար պահանջվող ծախքերի բոլոր ելեմնաները:

Որինակ, ըստ արժեքի շինարարական տուփ քարը պեմզաբետոնից պատրաստված, արհետական սնամեջ քարերի հետ համեմատելիս, չպետք ե վերցնել այդ քարերի արժեքն ըստ քանակի, այսինքն համեմատել հատուվի տուփի արժեքը նույն քանակության պեմզաբետոնի քարերի հետ, այլ պետք ե վերցնել այդ քարերը պատրաստի պատի մեջ և համեմատել նրանցից շինված պատերի ինքնարժեքն ամբողջությամբ, ինկատի առնելով պատերի կայուն հաստությունը, միենույն չերմանցկության պայմաններում:

Շինանյութերի տեխնիկական հատկությունները և այդ նյութերի գործադրության տնտեսական նպատակահարմարությունը կազմում են այն յելակետը, վորով պետք ե առաջնորդվել այս կամ այն կառուցվածքի համար պահանջվող շինանյութերի ընտրությունը կատարելիս:

Անկախ այդ պարտադիր պահանջներից, շինանյութերի ընտրության խնդրում պետք ե ինկատի առնել նաև այն հանգամանքը, թե ինչ քանակությամբ և արտադրվում տվյալ նյութը, պատճենական նշանակությունն ու գործադրության չափն արդյունաբերության այլ ձյուղերում:

Որինակ, նման զգուշավոր ընտրություն պետք ե կատարել սև մետաղի նկատմամբ, վորը թեև ունի բարձր ու արժեքավոր շինարարական հատկություններ, սակայն չափազանց խոշոր գործադրություն ունի նաև արդյունաբերության այլ ճյուղերում, մասնավոր մեքենաշինության մեջ, վորտեղ նաև անփոխարինելի:

Ինկատի ունենալով պահանջի համեմատությամբ սև մետաղի արտադրության քանակի պակասը, ընտրության համար պետք ե հիմք ընդունել վոչ թե նրա ձեռնտու արժեքն ու բարձր շինարարական վորակը, այլ պետք ե դեկավորվել ընդհանուր պետական տնտեսության շահերով և աշխատել բոլոր հնարատվոր տեղերում փոխարինել այդ մետաղն այլ նյութերով:

ՁԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ՏԵԽՆԱԿԱՐԱՐ ԿՇԻՐ

Տեխնակարար կշիռը ներկայացնում է մեկ միավոր ծավալ ունեցող նյութի քաշը բացարձակ խիտ դրությամբ, այսինքն առանց տվյալ նյութին հատուկ ծակոտիների:

Տ. կ.-ի համար իբրև միավոր չափանիշ ընդունված ե գրիսոր սմ, վորը ցույց ե տալիս 1 խոր սմ խիտ նյութի կշիռ գրամներով:

Վորովինետ 1 խոր սմ ջուրը կշռում 1 գր, ուստի յուրաքանչյուր նյութի Տ. կ. ցույց ե տալիս, թե ինչ չափով ծանր կամ թափանց ջրից տվյալ նյութը բացարձակ խիտ դրությամբ:

Նյութի Տ. կ. վորոշելու համար պետք ե նրա կշիռը բաժանել ծավալի վրա, վերցրած խիտ դրությամբ առանց ծակոտիների, վորն արտահայտվում ե հետեւյալ ֆորմուլայով՝

$$(1) \quad S = \frac{g}{v}, \quad \text{վորտեղ } S - \text{տեխնակարար } \text{կշիռն } b, \quad g - \text{նյութի}$$

կշիռն ե գրամներով, իսկ v — նրա ծավալը խոր սմ:

Ուրեմն այս գործողության ամբողջ եյությունը կայանում է նյութի կշիռ և ծավալի ճիշտ վորոշման մեջ:


Վորովինետ շինարարական նյութերի մեծագույն մասը ծակոտին ե, ուստի փորձը կատարելիս վերցնում են նյութը և մանրացնում են այն աստիճան, վորպեսզի մաղելիս ամրագությամբ անցի 1 քառ. սմ վրա 900 անցք ունեցող մաղի միջով, այլ խոսքով, մինչև վոր մանրացրած նյութի առանձին հատիկ ներն ստացվեն ըստ հնարավորին խիտ, վոչ ծակոտին դրությամբ:

Այնուհետև մանրացրած նյութի ծավալը վորոշում են՝ հեղուկի մեջ ընկղմելիս՝ նրա դուրս քշած հեղուկի ծավալը չափելու միջոցով:

Այդ փորձը կատարելու համար կան միքանի գործիքներ, վո-

նցից ամենագործածականը շինանյութերի համար լեռտեղի գործիքն ե:

Այդ գործիքի եյությունը պարզ յերեսում ե նկարից. առանց նկար 2:



նկ. 2.

Այդ թիվը բաժանելով 20-ի վրա, ստանում են ավագ նյութի տեսակարար կշիռը:

Ուրեմնակ, յեթե նման փորձով գտնված ե, վոր գործիքի մեջ լցված նյութը կշռում ե 57 գրամ, այդ դեպքում նրա տեսակարար կշիռը կլինի $\frac{57}{20} = 2,85$:

Փորձի կատարման համար իբրև հեղուկ սովորաբար գործ ե ածվում բենզինը, վորը, շնորհիվ իր դյուրացարժ հատկության, արագ ծծվում և լցնում ե փորձարկվող նյութի հատիկների մեջ գտնվող բոլոր դատարկությունները և տալիս ե ավելի ճիշտ արդյունքներ:

Բացի այդ, անհրաժեշտ է, վորպեսզի փորձարկվող նյութի և հեղուկի ջերմաստիճանը լինեն հավասար, հակառակ դեպքում նրանց տարբեր ջերմաստիճանի հետևանքով ստացվող հեղուկի անհամաչափ լայնացումը կարող է տալ վոչ ճիշտ արդյունքներ:

Եինարարական նյութերի հատկությունների ուսումնասիրության տեսակետից՝ տեսակաբար կշռի իմանալն անհրաժեշտ է գլխավորապես նյութերի ծակոտիկենությունը վորոշելու համար:

2. ԾԱՎԱԼԱՅԻՆ ԿՇԻՐ

Ծավալային կշիռ կոչվում է մեկ միավոր ծավալ ունեցող նյութի քաշն իր բնական դրությամբ, այսինքն իրեն հատուկ ծակոտիների հետ միասին:

Նյութերի կշիռը բնական դրությամբ կախումն ունի նրանց թացության աստիճանից, ուստի այդ գորոշման մեջ ճշտություն մտցնելու նպատակով, սովորաբար նյութերի ծավալային կշիռը վորոշում են 2 տարբեր պայմաններում:

1. Չորացրած դրությամբ՝ այդ դեպքում նյութը նախապես չորացնում են 100—120⁰ ջերմաստիճանի տակ, մինչև նրա ծակոտիների մեջ գտնվող ջրի լիակատար հեռացնումը:

2. Ողաչոր դրությամբ, այսինքն՝ նյութը յերկար ժամանակ նորմալ մթնոլորտային ու ջերմային պայմաններում պահպան հատուց հատուց:

Վորոշման յերկրորդ յեղանակը գլխավորապես գործադրվում է փայտեղենի և նման շինանյութերի համար, վորոնք հիգրոսկոպիկ են և մթնոլորտային նորմալ պայմաններում վորոշ չափով խոնավություն են վերցնում:

Ուրեմն, ծավալային կշիռը վորոշելու համար պետք է վերցնել չորացրած կամ ողաչոր նյութի նմուշն իրեն հատուկ ծակոտիկեն դրությամբ, կշռել և ստացված քաշը բաժանել նրա ծավալը վրա:

Այդ գործողությունն արտահայտվում է նույնպիսի ֆորմուլայով, ինչպես և տեսակաբար կշռի վորոշումը՝

$$(2) \quad r = \frac{g}{v}$$

վորտեղ r —նյութի ծավալային կշիռն է, g —նյութի քաշն և չոր կամ ողաչոր դրությամբ և v —նրա ծավալը՝ իրեն հատուկ բնական ծակոտիկեն դրությամբ:

Վորովհետև շինարարական նյութերի մեծագույն մասը ծակոտին է, ուստի նրանց ծավալն ավելի մեծ է, քան նույն նյութերի ծավալը, վերցրած առանց ծակոտիների, խիտ զրությամբ. իսկ վորովհետև նույն նյութի քաշը, անկախ նրա խիտ կամ ծակոտիկեն զրությունից, մնում է նույնը, ուստի նյութերի ծավալային կշիռն ընդհանրապես ավելի փոքր է, քան նույն նյութերի տեսակաբար կշիռը*: Վորչափ մեծ է նյութի ծակոտիկենությունը, նույնքան փոքր է նրա ծավալային կշիռը և ընդհանրապես:

Դործնական նպատակների համար շինարարական նյութերի ծավալային կշիռի իմանալը անհրաժեշտ է կառուցման մասերի ծանրությունը վորոշելու ու նրանց կայուն ամրությունը հաշվելու, նյութերի փոխադրության քանակն ու փոխադրական պայմանները վորոշելու և նրանց ջերմանցկության աստիճանը պարզեցնելու համար:

Բացի այդ, ծավալային կշիռը կարևոր է շաղախների և բհատունների մեջ խառնուրդ նյութերի քանակը չափավորելու համար: Ծավալային կշիռի համար իրեն միավոր չափանիշը ընդունված է նույնական գր/լսոր ամ:

Սակայն գործնական նպատակների համար մեծ մասմբ իրեն չափանիշ գործ և ածվում կիլ/լսոր մետրը, վորը ցույց է տալիս 1 խոր մետր նյութի կշիռը կիլոգրամներով:

Կանոնավոր ձև ունեցող նյութերի ծավալային կշիռը վորոշվում է շատ պարզ յեղանակով: Զափում և հաշվում են նմուշի ծավալը, այնուհետև վերցնում են նրա կշիռը չոր կամ ողաչոր դրությամբ, բաժանում են ծավալի վրա և ստանում են ծավալային կշիռը:

Իսկ կանոնավոր յերկրաչափական ձև չունեցող նմուշների ծավալը վորոշում են հեղուկի մեջ ընկղմելու և նրա դուրս քշած հեղուկի ծավալը չափելու միջոցով:


Այդ գործողությունը կատարելու համար գործ են ածվում միքանի տարբեր գործիքներ, ինչպես որինակ՝ Տեսմայերի, Զեղերի և Լյուդվիգի ծավալաչափ գործիքները:

Իր պարզությամբ ամենից հարմարը և գործածականը Լյուդվիգի գործիքն է, տես նկար 3:

* Տես աղյուսակ թ. 1.



Այդ գործիքն իրենից ներկայացնում ե մի ապակյա գլանա-
ձև անոթ, վորի վրա կապարե ծանրոցի միջոցով հարմարեցված ե
պինդ փակվող կոնաձև խուփը:



Նկ. 3

Կորից խուփը դնում են տեղը և բաժակից ջուրը հետ են լցնում
մինչև նշանը:

Բաժակի մեջ մասցած ջուրը կշռում և վորոշում են այդ ջրի
ծավալը, ինկատի ունենալով, վոր յուրաքանչյուր զրամին հա-
մապատասխանում ե 1 խոր սմ ջուր, վորն իր հերթին հավասար
և փորձարկվող նյութի ծավալը:

Ճիշտ արդյունքներ ստանալու նպատակով, անհրաժեշտ ե
փորձի յենթակա նյութը նախապատրաստել, վորի նպատակն ե
փակել նյութի ծակոտիները և ապահովել նյութը իր մեջ ջուր
ծծելու հնարավորությունից: Յեթե նյութը համեմատաբար խիտ
և քիչ ծակուակին, ինչպես որինակ՝ գրանիտը, բազալտը և նման
խիտ ապարները, այդ դեպքում փորձի յենթակա նյութի նմուշը
նախ չորացնում, կամ ողաչոր դրությամբ կշռում և վորոշում են
քաշը. հետո վերցրած նմուշը յետացնում են ջրի մեջ, վորպեսզի
ծակոտիները ջրով լցվին և այդ դրությամբ ընկղմում են անոթի
մեջ ու վորոշում նրա ծավալը, ինչպես այդ նկարագրված ե վե-
րևում:

Իսկ յեթե փորձի յենթակա նյութը ծակոտիկեն ե, այդ դեպ-
քում նախ վորոշում են նյութի նմուշի քաշը չորացրած կամ
ողաչոր դրությամբ, հետո ընկղմում են հալած պարափինի մեջ՝
նյութը ջրի համար անթափանցիկ թաղանթով ծածկելու համար,
նորից կշռում և ապա վորոշում են նյութի ծավալը՝ պատաժ պա-
րափինի հետ միասին վերոհիշյալ յեղանակով:

Ընդունելով պարափինի տեսակարար կշռը 0,93, վորոշում
հն պարափինի ծավալը հետեւյալ փորմուլայով՝

$$V_0 = \frac{g_1 - g}{0,93},$$

Վորտեղ V_0 պարափինի ծավալն ե, $g_1 - n$ մուշի կշռըն և պարափինի
հետ միասին և $g - n$ մուշի կշռը չորացրած կամ ողաչոր դրու-
թյամբ:

Սյնունեակ հանում են պարափինի ծավալը V_0 պարափինով
ծածկված նմուշի ծավալից և ստանում են նյութի ծավալը իր
բնական դրությամբ:

Բաժանելով նյութի սկզբնական քաշը նրա ծավալի վրա,
ստանում են նրա ծավալային կշռը՝

$$r = \frac{g}{V}$$

Ներքեք № 1 աղյուսակում տրվում են գործադրություն
ունեցող մի շաբք կարևոր շինանյութերի տեսակարար կշռները և
գուգընթաց նաև նրանց ծավալային կշռը:

Աղյուսակի ավյալներից յերեսմ ե, թե ինչպիսի տատա-
նումներ են տալիս թե տեսակարար կշռի և թե ծավալային կշռի
նկատմամբ համանուն շինարարական նյութերից շատերը:

Այդ տուած և գալիս նրանից, վոր նյութերը իրենց ներքին
կազմությամբ միատեսակ չեն, ուստի աղյուսակների մեջ բեր-
վող թվական տվյալները կարող են ունենալ միայն որիենտիր
նշանակություն:

Յեթե այս կամ այն կառուցողական աշխատանքի նկատ-
մամբ պահանջվում ե առանձին հաշվային ճշտություն, այդ դեպ-
քում անհրաժեշտ ե լրացրեցիչ լաբորատորական փորձի միջո-
ցով ճշտել նյութերի տվյալ հատկության թվական մեծությունը
և ըստ այնմ տալ նյութերին համապատասխան դորձադրություն:

ՆՅՈՒԹԵՐԻ ԱՅՈՒՆԸ	Տիսակարար կշիռը գրամ/լոր սմ	Մավալային կշիռը կիլ/լոր մ	Ծանոթու- թյուն
<i>Բնական շինանյութեր</i>			
1. Գրանիտ	2,55—3,02	2280—3000	
2. Պորֆիրիտ	2,40—2,80	2340—2800	
3. Սիհնիտ	2,70—3,00	2470—2960	
4. Դիորիտ	2,80—3,00	2800—2920	
5. Գնեյս	2,60—2,90	2400—2700	
6. Բազալտ բնական	2,80—3,30	2420—2990	
7. Բազալտ ձուլածո	3,00	3000	
8. Տրամիտ	2,20—2,70	2180—2590	
9. Անդեզիտ	2,80—2,90	—	
10. Արթիկ տուֆ—լավա	2,56	750—1400	
11. Տուփ Աղանդ	2,15—2,49	1720	
12. > Դալմայի	2,49	1270—1500	
13. > Ջրվեժի (հին)	2,45	1380	
14. > > (նոր)	—	1740	
15. > Կորլարի	2,41—2,42	1320—1710	
16. Պեմզա Հայաստանի	2,35—2,50	300—590	
17. Ավազաքար կվարցային	2,40—2,70	2080—2500	
18. > կրային	1,90—2,70	1660—2680	
19. > կավային	—	2120—2190	
20. Կվարցիտ	2,50—2,80	2460—2650	
21. Մարմար	2,60—2,90	2500—2840	
22. Կրաքար	2,50—3,00	1580—2800	
23. > Խեցային	1,84	900—1500	
24. > մերգելային	—	2010—2600	
25. Կալից	—	1800—2400	
26. Դոլոմիտ	2,30—2,95	—	
27. Կալ բրուտային	1,80—2,60	1500—1550	
28. Շիֆեր	2,60—2,70	2600	
29. Ավաղ	2,58—2,70	1400—1650	
30. Խիզար	2,62—2,64	1690—1800	
31. Խիճ	2,58—3,10	1250—1530	
<i>Արհեստական շինանյութեր</i>			
32. Աղյուս կտվե հոռմ	—	1775	
33. > > թրծած	2,60—2,75	1620—1900	
34. > սիլիկատային	2,53—2,56	1750—1810	
35. > ծալոտկեն կավային	—	600—1200	
36. > տրհպելի	—	500—850	

ՆՅՈՒԹԵՐԻ ԱՆՈՒՆԸ	Տիսակարար կշիռը գրամ/լոր սմ	Մավալային կշիռը կիլ/լոր մ	Ծանոթու- թյուն
37. Աղյուս տրետիլի ծակոտկ.	—	—	308—450
38. > կավի ու տրհպելի	—	—	1200
39. > նույնը սնամիջ ու ծակոտկեն	—	—	400—1200
40. Բետոն	2,52—2,60	2000—2360	
41. Դաղաթառն և վրփրաբետոն	—	—	300—1100
42. Պեմզա-բետոն $\frac{1}{10}$ — $\frac{1}{12}$	—	—	700—950
43. Դիսոսիտ	1,90—2,30	700—1250	
44. Քուլուլիտ Մեկուսիչ շինանյութեր	1,55	1050—1100	
45. Ֆիբրոլիտ	—	—	250—450
46. Կամիշետ	—	—	200—300
47. Տորֆունում	—	—	200—400
48. Տորփ	—	—	130—200
49. Խցան	—	—	45—130
50. Թեփ	—	—	190—215
51. Թաղիք	—	—	150—270
52. Փայտի ածուխ	—	—	185—215
53. Շեփելին	—	—	100—150
54. Մարողին	—	—	300—370
55. Ազքեստ	—	—	280—580
56. Դիսոտմիտ	2,02—2,33	120—860	
57. Շլակներ	—	—	650—1150
58. Կերամիզիտ	—	—	400—800
59. Տերմոզիտ	—	—	300
<i>Կապակցող նյութեր</i>			
60. Կիր ուկային չժարած	3,10—3,20	900—1300	
61. > " մարած	2,10	403—704	
62. Կրաշաղախ 1 : 3	—	1700—1900	
63. Կիր հիդրալիկ	2,80—2,90	—	
64. Բոման ցեմենտ	2,60—3,00	—	
65. Պորտլանդ ցեմենտ	3,05—3,20	1360—1900	
66. Բոկսիտային ցեմենտ	3,00—3,30	1100	
67. Քիզս կամ ալեբաստր	2,75	740—1100	
68. Անհիդրիտային ցեմենտ	2,80—2,90	680—1450	
69. Ասֆալտ	2,23	2120—2220	
<i>Շինափայտ</i>			
70. Կաղնի	1,305	720—770	
71. Հաճարի	1,310	690—720	
72. Սոճի	1,625	480—650	
73. Ցեղենի	1,525	420—480	

Մէջին 630

ՆՅՈՒԹԵՐԻ ԱՆՌԻՆԸ	Տեսակարար կշիռը զրամ/նոր մմ	Մավալային կշիռը կիլ/նոր մմ	Մանոթու- թյուն
74. Սետաղնար	7,00—7,80	7000—7200	
75. Չուգուն Յերկաթ և պողպատ	7,80—7,88	7800—7880	
76. Ոժանդակ նյութեր	2,4—2,50	2400—2500	

3. ԾԱԿՈՏԿԵՆՈՒԹՅՈՒՆ

Նյութերի ծակոտկենությունն իրենից ներկայացնում է այդ նյութերի մաջ գույք դատարկությունների ծավալը, վեցըրած տոկոսներով:

Ծակոտկենության աստիճանը շինարարական նյութերի կարեռ ֆիզիկական հատկություններից մեկն են, վորով բնորոշվում են նրանց ամրությունը և ջերմություն, ձայն, ող ու ջուր անցկացնելու ունակությունը:

Նյութերի ծակոտկենությունը վորոշվում է հետեյալ յեղանակով:

Նախ վորոշում են տվյալ նյութի տեսակարար կշիռը և ծավալային կշիռը:

Այնուհետև ծավալային կշիռը բաժանելով տեսակարար կը շնորհած կրա, ստանում են նյութի խտության աստիճանը: Այդ հարաբերությունը արտահայտվում է հետեյալ ֆորմուլայով՝ $\frac{v_0}{S}$, վորոշեղը՝ v_0 — նյութի ծավալային կշիռն, S — նրա տեսակարար կշիռը և ցույց ե տալիս, թե մեկ միավոր ծավալ ունեցող նյութի մեջ վոր մասն ե կազմում ինքը խիստ նյութը: Ուրեմն այդ նյութի մեջ գույք դատարկությունների ծավալը կլինի՝ ստացված թվի լրացումը մինչև մեկ ամբողջը, այսինքն՝

$$P = 1 - \frac{v_0}{S} = \frac{S - v_0}{S}$$

Վորոշեղը՝ P — նյութի ծակոտկենության աստիճանն են:

Նյութի ծակոտկենությունը տոկոսներով արտահայտելու

համար պետք է հիշյալ հարաբերությունը բազմապատկել 100-ի

$$\text{վրա, ըստ վորում կստացվի } \frac{S - v_0}{S} \cdot 100\% \quad (3)$$

Որինակ, յեթե նյութի ծավալային կշիռը հավասար է 2,4, իսկ տեսակարար կշիռը — 3, այդ դեպքում տվյալ նյութի ծակոտկենությունը տոկոսներով կլինի՝

$$\frac{S - v_0}{S} \cdot 100 = \frac{3 - 2,4}{3} \cdot 100 = \frac{0,6 \cdot 100}{3} = 20\%$$

4. ԶՈՒՐ ԾՄԵԼՈՒ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ ԿԱՄ ԶՐԱՀԱԳԵՑՈՒՄ

Նյութի ջրահագեցումը կամ ջուր ծծելու ունակությունը այն հատկությունն է, վորը ցույց ե տալիս, թե ինչ քանակությամբ ջուր կարող է ծծել տվյալ նյութը ջրի մեջ ընկցելիս իր սկզբնական ծավալի կամ քաշի համեմատությամբ, արտահայտված տոկոսներով:

Այդ հարաբերությունն արտահայտվում է հետեյալ ֆորմուլաներով՝

$$w. \text{ Բայց ծավալի } w = \frac{v_0}{V} \cdot 100\% \quad (4),$$

վորանունը՝ w — նյութի ջրահագեցումն է այդ նյութի ծավալի համեմատությամբ, v_0 — ծծվող ջրի ծավալն է և V — նյութի ծավալը:

$$p. \text{ Բայց կշռի } p = \frac{g_0}{g} \cdot 100\% \quad (5),$$

վորանունը՝ p — նյութի ջրահագեցումն է չորացրած նյութի կշռի համեմատությամբ, g_0 — ծծվող ջրի քանակն է ըստ կշռի և g — նյութի կշիռը իր սկզբնական չորացրած դրությամբ:

Գործնական նպատակների համար գործադրվում է նյութերի հիշյալ հատկության վորոշման թե առաջին և թե յերկրորդ յեղանակը, սակայն պետք ե նկատել վոր նյութերի ջրահագեցման մասին ավելի ճշշտ գաղափար կարելի յե ստանալ յերբայի վորոշումը կատարվում է ըստ ծավալի, վորովհետև տվյալ դեպքում համարվությունը կատարվում է համարժեք թվական՝ մե-

ծությունների մեջ, անկախ նրանց ֆիզիկական հատկություններից:

Այդ գործողությունը կատարելու համար, նախ՝ վերևու նկարագրված յեղանակով վորոշում են փորձի յենթակա նյութի ծավալը, այնուհետև՝ վերցնում են նյութի նմուշը, չորացնում են մինչև իր մշտական կշիռը և նկատում են այդ քաշը. հետո այդ նմուշը աստիճանաբար ընկղմում են ջրի մեջ մինչև նյութի լիակատար հագեցումն ու նորից կշռում են և ստացվող քաշերի տարրերության միջոցով վորոշում են ծծված ջրի քանակը:

Ուրիշն, յեթի ջրով հագեցրած նյութի կշիռը նշանակենք g_1 տառով, իսկ նույն նյութի կշիռը չորացրած դրությամբ նշանակենք g տառով և վերցնենք նրանց տարրերությունը, կատարած ծծված ջրի կշիռը՝ $g_1 - g = g_0$

Ստացված տարրերությունը՝ g_0 , գրամներով վերցնելու գեպում, միաժամանակ տալիս ե ծծված ջրի ծավալը խորանարդ սանտիմետրերով. հետևաբար ծծված ջրի ծավալը $V_0 = (g_1 - g)$ խոր ամ:

Եյնուհետև նյութի ջրահագեցումը ըստ ծավալի վորոշում և վերևու բերված (4) փորմուլայի միջոցով՝

$$W = \frac{V_0}{V} \cdot 100\% = \frac{g_1 - g}{g} \cdot 100\%$$

Հստ կշռի նյութի ջրահագեցումը ստացվում է համաձայն մերկորդ փորմուլայի (5)

$$d = \frac{g_0}{g} \cdot 100\% = \frac{g_1 - g}{g} \cdot 100\%$$

Որինակ՝ յեթե փորձի յենթակա նյութի ծավալը $= 40$ խոր ամ, նյութի կշիռը չորացրած դրությամբ $= 100$ գրամ, իսկ ջուր ծծելուց հետո $= 110$ գրամ, այդ դեպքում տվյալ նյութի ջրահագեցումը կլինի՝

ա. Հստ ծավալի՝

$$W = \frac{V_0}{V} \cdot 100\% = \frac{g_1 - g}{g} \cdot 100\% = \frac{110 - 100}{40} \cdot 100\% = 25\%$$

բ. Հստ կշռի՝

$$d = \frac{g_0}{g} \cdot 100\% = \frac{g_1 - g}{g} \cdot 100\% = \frac{110 - 100}{100} \cdot 100\% = 10\%$$

Փորձի արդյունքները ձիցտ ստանալու համար անհրաժեշտ է, վորպեսզի փորձարկված նյութի նմուշը լիովին կշտացած լինի ջրով:

Նյութի հագեցմանը ջրով կարելի ե հասնել հետևյալ միշտցառություններով.

ա. Նյութը ջրի մեջ միքանի անդամ յեռացնելու և սառեցնելու միջոցով:

բ. Ընկղմելով նյութի նմուշը ջրի մեջ աստիճանաբար. նախ նմուշի մի մասը, վորպեսզի ծակոտիների մեջ դանվող ողը հասրավություն ունենա դուրս դալու. այդ դրության մեջ միքանի ժամ պահելուց հետո հետպատե ավելացնում են ջուրը, մինչև ամբողջվին ծածկվիլը:

գ. Հագեցումը կատարելով նոսրացած ողի կամ վակուումի միջավայրում, վորի հետևանքով ծակոտիների մեջ դանվող ողը լայանանում և մեծ մասամբ դուրս ե գալիս ծակոտիներից, իսկ հետագայում նորմալ ճնշման աղղեցությամբ ստացված դատարկությունները լցվում ե կշտանում են ջրով:

Համագրելով նյութերի ջրահագեցումը նույն նյութի ծակոտինության հետ, պետք ե նկատել, վոր նյութերի ջրահագեցումը սովորաբար ծակոտինությունից փոքր ե լինում. Ընդհանրապես ամեն մի նյութ ունի ջրահագեցման իր սահմանը, վորը կախված է ծակոտիների աստիճանից, ծակոտիների մեծությունից և ծակոտիների կազմությունից. որինակ, համար նյութերի մեջ գանվող ծակոտիները կազմում են ջրի համար անթափանց փակ բջիջներ, բացի այդ, վորովհետև ջուրը ծծվում և մնում է ծակոտիների մեջ շնորհիվ մազականության, ուստի յեթե այդ անցքերը խոշոր են, այդ կեպքում ջուրը ծակոտիներից դուրս ե թափվում:

Հիշյալ պատճառներով պետք է բացատրել այն տարրերությունները, վոր գոյություն ունեն նյութերի ջուրը ծծելու և ծակոտիների մեջ:

Այդ տարրերությունները պարզ յերեսում են և աղյուսակի տվյալներից, վորտեղ բերված մի շարք լայն գործադրություննեցող շինանյութերի ծակոտինությունը և զուգընթաց՝ նրանց ջրահագեցումը կամ ջուրը ծծելու ունակությունը:

ՆՅՈՒԹԵՐԻ ԱՆՈՒՆԸ	Ծակոտկե- նությունը %	Ջրահագե- ցումը կամ ջուր ծծելու ունակու- թյունը %	Ծանոթու- թյունը %
1. Գրանիտ	0,45—0,61	0,20—0,70	
2. Պորֆիրիտ	0,29—2,75	0,10—0,76	
3. Սինիտ	1,38		Պատահում
4. Գլոբիտ	0,25		Են բազալտի տեսակներ,
5. Բազալտ բնական	1,70—2,86	0,9—1,28	վորոնց ծա- կուկ. հաս-
6. Բազալտ ձուլածու	0	0	կուկ.
7. Տրամիտ	0,8—2,45		Նում և մինչեւ 9,00
8. Արմիկ տուփ լավա	57,7—60,3	33,6—43,4	
9. Տուփ Ավանի	29,8/45,3		
10. > Գալմայի	38/49	3եռացրած	Աղյուսակի
11. > Զրիեժի հին քարհանքի	43,7/44,4	ջուռ 22, 70/0	1-ին թվերը
12. > > նոր քարհանքի		սառը ջուռ	կերպերում
13. > Կղզլարի	29,8/45,3	մինչեւ 18 %	Են կարմիր տուփերին,
14. Պետքա	75,5—86,2	32,8—53,5	իսկ 2-րդ
15. Ավազաքար կվարցային			թվերը ուն
16. > Կրային	6,90—25,5	6—14,45	տուփերին
17. > Կավային			
18. Մարմար	0,22—2,09		
19. Կրաքար	2,07—19,23	0,75—10	
20. Խեցային	30—40	25—30	
21. Դիտոնիտ	76—85	70—80	
22. Կվարցիտ	1,60—6,0	—	
23. Կալ բրուտային	—	15—32	
24. Շիֆեր	0,11—0,15	0,6	
25. Ավազ	18—55	18—55	
26. Խիճ	40—50	40—50	
27. Խիպար	30—	30—	
Արհեստական շինանյութեր			
28. Ալյուս կավե թթած	30	8—20	
> սիլիկատային	21—33	12—17	
> ծակոտկեն կավային	40—50	20—40	
> տրեալելի	70—80	40—50	
Պետքա-բհուն	—	10,9—51	
Բուխուլիտ	22	14	

ՆՅՈՒԹԵՐԻ ԱՆՈՒՆԸ	Ծակոտկե- նությունը %	Ջրահագե- ցումը կամ ջուր ծծելու ունակու- թյունը %	Ջրահագե- ցումը կամ ջուր ծծելու ունակու- թյունը %
			Ծակոտկե- նությունը %
34. Ֆիբրոլիտ			—
35. Կրաշաղախ			26
Փայտեղեն			
36. Կաղնի			42
37. Հաճարի			46
38. Սոճի			65
39. Ցեղեղնի			70

5. ԶՐԱՆՑԿՈՒԹՅՈՒՆ

Ջրանցկություն կոչվում է նյութի իր միջով ջուր անցկաց-
նելու հատկությունը, վորը ցույց է տալիս, թե ինչ քանակու-
թյամբ ջուր կարող է անցնել վորոշ ճնշման տակ մեկ միավոր
ժամանակամիջոցում, մեկ միավոր հաստություն և մեկ միավոր
մակերես ունեցող նյութի միջով:

Շինանյութերի ջրանցկության վորոշումը կարևոր է գլխա-
վորապես ծածկային նյութերի, ամբարտակների ու ավազանների
վրա գործադրվող նյութերի, ջրաբաշխական ու կոյուղու խողո-
վակների և այլ նման նյութերի համար, ըստ վորում յուրաքան-
չյուր նյութի ուսումնասիրությունը կտարարվում է նրա գործա-
դրությանը համապատասխանող պայմաններում:


Այդ փորձարկումները կատարելու համար կան հատուկ գոր-
ծիքներ, ինչպիս որինակ՝ Ամսլերի, Տետմայերի, Լախտինի և ու-
րիշները:

Այդ գործիքների միջոցով փորձարկումը կատարվում է հե-
տևյալ յեղանակով. փորձի յենթակա նյութից պատրաստված սա-
լիկը հարմարեցվում է գործիքի զանաձև մասում իրեն հատակ։
Այնուհետև ստացված զանաձև անութի մեջ լցվում է ջուր, վո-
րին կարելի յն տակ պահանջվող ճնշումը, իսկ սալիկի տակ հար-
մարեցվում է մի դատարկ անոթ՝ այդ սալիկի միջով անցնող
ջուրը հավաքելու և քանակը վորոշելու համար։ Ենկատի տակե-
լով ջրի ճնշման աստիճանը, փորձարկվող սալիկի մակերեսն ու
հաստությունը, փորձի կատարման ժամանակամիջոցը և փորձվող
նյութի միջով անցնող ջրի քանակը, պարզ հաշվարկումների մի-
ջոցով վորոշում են տվյալ նյութի ջրանցկության աստիճանը
համապատասխան չափանիշներով։

Ճիշտ արդյունքներ ստանալու համար անհրաժեշտ է, վոր-

պեսզի փորձի կատարման ընթացքում շարունակ պահպանված լինի միանդամայն անփոփոխ ճնշում:

Նկար 4-ը գույց և տրված ֆրուլինգ-Միխայելսի գործիքը, վորտեղ սալիկի վրա ազդող ջրի ճնշմանը փոխարինում և սալիկի տակը ստացվող նոսրացած տարածությունը կամ վակուումը:



Նկ. 4

Այդ գործիքը գործ և ածվում դիսավորապես ցեմենտի և այլ կտակացող նյութերի շաղախների ջրանցկությունը վորոշելու համար:

Գործիքը բաղկացած է իրար վրա սերտ հագնող յերկու ապակե գլաններից, վորոնց միացման տեղում հատուկ հարմարեցրած կառուչուկներում ողակի մեջ ամրացվում և ջրով հագեցրած փորձիքությունը:

Այնուհետև հավաքում են ամբողջ գործիքը, ինչպես այդ ցույց և արված նկարում, լցնում են սալիկի վերին մասը ջրով մինչև 0 նշանը, իսկ ներքեւ մասից ցույց են ծծում ողը մինչև 1 սթնոլորտ վակուումի ստանալը, վորը չտփվում է գործիքի այդ մասին միացրած ժանումեարի միջոցով:

Վակուումի հետևանքով սալիկի վերին և ներքին մասում ստացվող ճնշման տարրերությունների շնորհիվ, վերել մասից ջուրը վորոշ ծավով ծալում ու սալիկի միջով անցնում է ներքեի մասը, և ջուրը վերին մասում մկնում է պակասեր ջրի մակերեսութիւնի իջեցումը նկատում են աստիճանավորված խողովակի վրա և միաժամանակ նշանակում են փորձի տեսողությունը, ու համապատասխան հաշվարկումների միջոցով վորոշում են փորձարկվող նյութի ջրանցկության աստիճանը:

6. ԶԵՐՄԱՆՑԿՈՒԹՅՈՒՆ

Զերմանցկություն կոչվում է նյութի իր միջով չերմություն անցկացնելու հատկությունը, վորի թվական մեծությունը վորոշելու համար իբրև չափանիշ ծառայում է չերմանցկության գործակիցը:

Զերմանցկության գործակիցը ցույց և տալիս, թե ինչ քանակությամբ կամ քանի կալորի ջերմություն և անցնում 1 ժամում, 1 մետր հաստություն և մեկ տու մետր մակերես ունեցող նյութի միջով, յեթե ջերմության տարրերությունը այդ նյութի հակագիր կողմերում կազմում 1°C :

Ընդհանրապես վորեն նյութից հարմարեցրած հարթ պատի միջով անցնող ջերմության քանակը հակառակ հարաբերական և պատի հաստությանը և ուղիղ հարաբերական և պատի մակերեսին, այդ պատի հակագիր կողմերում յեղած ջերմաստիճանների տարրերությանը, ժամանակի տևողությանը և վերջապես ջերմանցկության գործակիցն, վորը միենույն նյութի նկատմամբ ներկայացնում է իրենից մշտական մեծություն կամ կոնստանտ:

Նյութերի ջերմանցկությանը վերաբերող հիշալ հարաբերությունը արտահայտվում է հետևյալ ֆորմուլայով՝

$$(6) \quad Q=1 \cdot \frac{F \cdot (t_2 - t_1)T}{a}, \quad \text{վորտեղ } Q \text{ տառով նշանակված է ջերմության քանակը արտահայտված մեծ կալորիներով, } 1-\text{ջերմանց}$$

Գության գործակիցն ե, F—պատի մակերեսը բառ մետրերով, t_2-t_1 ջերմաստիճանների տարբերությունը պատի հակադիր կողմերում ըստ C^0 , T—տվյալ գործողության տևողությունը ժամերով և օ—պատի հաստությունը մետրերով:

Այդ ֆորմուլայի հիման վրա վորոշվում ենակ ջերմանցկության գործակցի թվական նշանակությունը, ըստ վորում

Q · a

$$(7) \quad 1 = \frac{Q \cdot a}{F(t_2 - t_1) T}, \quad \text{կամ, } j \cdot \theta \text{ պատի հաստությունը, } \text{մակերեսը,}$$

ջերմաստիճանների տարբերությունը և ժամանակի տևողությունը վերցնենք միավոր չափանիշներով, ինչպես այդ արված և ջերմանցկության գործակցի բնորոշման մեջ, այդ դեպքում լի համար կստացվի հետեւյալ ֆորմուլան՝

$$1 = \frac{Q \cdot a}{F \cdot \Delta t \cdot \theta} \quad \text{կամ}$$

Նյութերի ջերմանցկության գործակիցը 1 վորոշելու համար կան մշակված բազմաթիվ միջոցներ, վորոնցից ամենապարզը Մյունխենի տեխնիկական ֆիզիկայի լաբորատորիայի կողմից առաջարկված յեղանակն է*, վորի եյությունը հետեւյալն է.

Լաբորատորիայի մեջ շինում են մեկ հատ փոքրիկ տնակ 1—2 խոր մետր տարրողությամբ. տես նկար 5:

Տնակի յերկու պատերը, հատակը և առաստաղը շինվում են խցանից պատրաստված մեկուսիչ հաստ սալերից, վորոնց ջերմանցկության գործակիցը նախորոք հայտնի յե, իսկ մյուս յերկու պատերը հարմարեցվում են փորձի յենթակա նյութից:

Տնակի մեջ կախում են ջեռուցիչ ելեկտրական վառարան, վորը անակի ողը տաքացնում է $40-60^0\text{C}$ և մեկ փոքրիկ ելեկտրական հովահարիչ, ողի ջերմությունը տնակի ըոլոր մասերում հավասար աստիճանի վրա պահելու համար:


Փորձարկվող նյութից պատրաստված պատերի հակադիր կողմերում, ջերմության աստիճանը չափելու նպատակով, այդ պատերի յերկու յերեսի վրա հարմարեցվում են տերմոնելեմենտներ: Փորձի ընթացքում լաբորատորիայի ողի ջերմաստիճանը պահպում է 20^0C :

Ջեռուցող ելեկտրական գործիքի համար 1 ժամվա ընթացքում կատարվող ջերմության ծախքը վորոշվում է ելեկտրականության հաշվիքի միջոցով: Նույնը կարելի յե վորոշել նաև հի-

* Տես Տիմրոտ Լ. Լ.—Определение теплопроводности строительных и изоляционных материалов. Стр. 73.

շալ գործիքները սնող ելեկտրական հոսանքի ուժի և լարման թվական մեծությունը չափելու և համապատասխան հաշիվների կատարման միջոցով:

Փորձի ընթացքում ծախսվող ջերմության մի մասն անցնում է կորչում և խցանե մեկուսիչ սալերից պատրաստված տնակի յերկու պատերի, հատակի ու առաստաղի միջով: Այդ կորուստը հեշտությամբ կարելի յե հաշվել, նախորոք իմանալով խցանային



Նկ 5

մեկուսիչ մասերի ջերմանցկության գործակիցը, ջերմաստիճանների տարբերությունները պատերի հակադիր կողմերում, այդ պատերի մակերեսը և հաստությունը:

Մեկուսիչ պատերի միջով կատարվող ջերմության կորուստի քանակը հանելով ծախսված ջերմության ընդհանուր քանակից, ստանում են ջերմության այն քանակը, վորը ծախսվում է փորձարկվող նյութից շինված պատերի միջով:

Այսուհետև չափումների միջոցով վորոշում են փորձարկման յենթարկվող պատերի նկատմամբ պահանջվող բոլոր թվական տվյալները և համապատասխան հաշվարկումներ կատարելով 1-ին վերաբերող վերոհիշյալ (7) փորմուլայի մեջ, վորոշում են տվյալ նյութի ջերմանցկության գործակցի թվական մեծությունը:

Որինակ, փորձի համար վերցնենք նման ձևով պատրաստված մեկ խորանարդ մետր ծավալ ունեցող փոքրիկ տնակ, վորը ունի 6 միաչափ կողմեր, յուրաքանչյուրը 1 քառ. մետր:

Յենթարենք՝ տնակի յերկու պատերը, առաստաղն ու հատակը շինված են 12 ամ հաստության խցանային սալերից, վորոնց ջերմանցկության գործակիցն է 0,035:

Տնակի մյուս յերկու պատերը հարմարեցնում ենք փորձի յենթակա վորեւել շինանյութից, որինակ՝ 0,1 մետր հաստություն ունեցող գրանիտի սալերից:

Դետք և վորոշել այդ գրանիտի ջերմանցկության գործակիցը, յեթե փորձի կատարման տևողությունն է 1 ժամ, փորձարկվող պատերի ներսի կողմում ամբողջ փորձի ընթացքում ջերմաստիճանը հավասար է 60°C , իսկ զրաֆի յերեսում 30°C , գործադրված ելեկտրական եներգիայի ծախքը ըստ հաշվիչի կազմում է 2 կիլովատ ժամ: Այս խնդիրը լուծելու համար նախ պետք է վորոշել ջերմության այն քանակը, վորը անցնում է կորչում և մեկուսիչ պատերի միջով:

Համաձայն վերեւ բերված փորմուլայի, մեկուսիչ պատերի միջով անցնող ջերմության քանակը՝

$Q=1 \cdot \frac{F(t_1-t_2)T}{a}$, վորտեղ ինչպես արդեն հայտնի յենթարենթականից անցնող ջերմության քանակը, $a=0,035$, $F=4 \times 1$ քառ. մետր, $T=1$ ժամ, $a=12$ ամ. $=0,12$ մետր, իսկ տերմուելեմենտների միջոցով ստացված ջերմաստիճանների տարրերությունը մեկուսիչ պատերի հակառիք կողմերում համաձայն փորձի տվյալների յենթարենք կազմում է 38°C :

Փոխարինելով փորմուլայի մեջ տառերը համապատասխան թվերով, գտնում ենք, վոր խցանային մեկուսիչ պատերով անցնող ջերմության քանակը՝

$Q=\frac{0,035 \cdot 4 \cdot 1 \cdot 38 \cdot 1}{0,12}=\frac{0,035 \cdot 4 \cdot 38}{0,12}=44$ կալորի: Այսուհետեւ գրանիտի ջերմանցկության գործակիցը վորոշում է (7) ֆորմուլայի միջոցով:

$$1=\frac{Q \cdot a}{F \cdot (t_2-t_1) \cdot T}=\frac{m \cdot a \cdot t_2}{m \cdot t_2 \cdot F \cdot T},$$

գործակի համաձայն փորձի տվյալների՝ $a=0,1$ մետր, $F=3 \times 1$ քառ. մետր, $t_2=60^{\circ}\text{C}$, $t_1=30^{\circ}\text{C}$ և $T=1$ ժամ:

Դեռևս անվորոշ և մնամ գրանիտի սալերի միջով անցնող ջերմության Q -ի քանակը, վորի թվական մեծությունը պարզեւում համար ունենք հետեւյալ տվյալները:

Դիտենք, վոր ըստ հաշվիչի տնակի ջեռուցման համար կատարված ելեկտրական եներգիայի ծախքը կազմում է 2 կիլովատ-ժամ. ընդունելով 1 կիլովատ-ժամի ջերմային համարժեքը 860 կալորի, գտնում ենք, վոր տնակի պատերի միջով կատարված ընդհանուր ջերմության կորուստը ջերմային չափանիշներով կլինի $2 \times 860=1720$ կալորի:

Վորովհետեւ ջերմության կորուստը խցանային մեկուսիչ պատերի միջով, համաձայն բերված հաշվականի, կազմում է 44 կալորություն գրանիտի միջով անցնող ջերմության քանակը կլինի $1720-44=1676$ կալ.

Դնելով վերոհիշյալ փորմուլայի մեջ տառերի փոխարեն նրանց թվական նշանակությունը, ստանում ենք գրանիտի ջերմաստիճանը՝ գործակիցը $1=$

$$\frac{1676 \cdot 0,1}{2 \cdot 1 \cdot (60-30)}=\frac{1660 \cdot 0,1}{2 \times 30} \cong 2,79$$

Եթենանյութերի ջերմանցկության աստիճանը չափազանց կարևոր նշանակություն ունի բնակարանների ջերմային մեկուսացման տեսակետից, որինակը նշանակած է նաև նախագծային դեպքում՝ տեսակետից: Որինակ, պատերը նույն հաստության դեպքում՝ տեսակետից: Որինակ, պատերը նույն հաստության դեպքում՝ տեսակետից: Եթենանյութերից շինված տները ձմեռը ցուրտ են լինում, իսկ ամառը շոգ. ուստի, բնակարաններում նորմալ ջերմային պայմաններ առաջնական նպատակով, անհրաժեշտ է շինարարական նյութերի համապատասխան ընտրություն: Կատարելու և այլ նյութերի ջերմանցկության աստիճանն ինկատի ունենալով վորոշել պատերի ոպտիմալ հաստությունը:

Գետք և սակայն ինկատի ունենալ այն հանգամանքը, վոր նյութերի ջերմանցկության գործակիցը չի ներկայացնում իրենից անփոփոխ մեծություն, այլ տարբեր պայմաններում նա

զգալի փոփոխության և յենթարկվում և կախված է հետևյալ գործունեքից:

1. Միենույն նյութի ջերմանցկության գործակիցը կախումն ունի այդ նյութի խոնավության աստիճանից:

Նյութերի թացության աստիճանը ավելանալու դեպքում ավելանում և նաև նրանց ջերմանցկության գործակիցը:

Որինակ, ըստ պրոֆ. Սկրամտայելի տվյալների, աղյուսից շինված թարմ պատի ջերմանցկության գործակիցը համառ և մինչև 1,2, կառուցումից 1—2 տարի անցնելուց հետո—0,70, շատ հին և չոր աղյուսի փորմածքի ջերմանցկության գործակիցը պահպանում են մինչև 0,40 *:

2. Նյութերի ջերմանցկության գործակիցը փոփոխվող ջերմանության աստիճանի ազդեցության տակ ինքը ևս յենթարկվում և փոփոխվան, ըստ վորում՝ ջերմաստիճանի բարձրացման դեպքում, ջերմանցկության գործակիցի թվական մեծությունը ևս ավելանում և ևնդհակառակը:

Համաձայն Տիմրոտի տվյալների՝ նյութերի ջերմանցկության գործակիցը, ջերմության լուրաքանչյուր 100°C բարձրանալու դեպքում, ավելանում և իր սկզբնական թվական մեծության համեմատությամբ $2-35\%$ -ովլ **:

3. Նյութերի ջերմանցկությունը դգալի չափով կախումն ունի, այդ նյութերի ծավալային կշռից:

Վորքան նյութի ծավալային կշռով փոքր և, ուրեմն վորքան բարձր և նրա ծակոտկենության աստիճանը, այնքան փոքր և նրա ջերմանցկության գործակիցը և հետևաբար նույնքան ուժեղ են այդ նյութի մեկուսի հատկությունները:

Ծավալային կշռի և ջերմանցկության գործակիցի մեջ գոյություն ունեցող հեշտակ փոխհարաբերությունը պարզ կերպով յերսում և ներքեւ բերվո՞՝ Տիմրոտի տվյալ դիագրամայից ***. տես նկար 6:

Սակայն անհրաժեշտ և նկատել վոր նույն ծավալային կշռը և նույն ծակոտկենությունն ունեցող նյութերի ջերմանց-


* Տես проф. Б. Г. Скрамтаев.—Введение в курс строительных материалов, стр. 35.

** Д. Л. Тимрот. Определение теплопроводности строительных и изоляционных материалов, стр. 81.

*** Д. Л. Тимрот. Определение теплопроводности строительных и изоляционных материалов, стр. 81.

կության գործակիցների թվական մեծությունները հաճախ առանումներ են տալիս: Այդ տատանումները հետևանք են նյութերի ծակոտիների մեծության և ձեր:

Ըստհանրապես մանրածակոտկեն նյութերը, խոշոր ծակոտիներ ունեցող համանուն նյութերի համեմատությամբ, տալիս



Թյուն ունեն, ինչպես են փայտը և այլ նման նյութերը, թելիկ-ների ուղղությամբ տալիս են ավելի բարձր ջերմանցկություն, քան թելիկներին ուղղությամբ:

Համաձայն վերռիշյալ դիտողությունների՝ շինանյութերի ջերմանցկությունը, հետևաբար և նրանց մեկուսիչ հատկությունը ները փորոշելիս արճաժեշտ և միաժամանակ ինկատի առանել և ցույց տալ այդ նյութերի փորձարկման ջերմաստիճանը, խոնավության աստիճանը, ծավալային կշիռը և ծակոտկենությունն ու այդ ծակոտիների կազմությունը *:

Ներքեւ Ն 3 աղյուսակում ցույց են տրված կարևորագույն շինանյութերի ջերմանցկության գործակիցները և համապատասխան պատակով զուգընթաց արվում են նաև այդ նյութերի ծավալային կշիռները:

Ա Դ Յ Ո Ւ Ս Ա Կ Հ Ն 3

ՆՅՈՒԹԵՐԻ ԱՆՈՒՆԸ	ԶԵՐՄԱՆՑԿՈՒ- ԹՅԱՆ ԳՈՐԾԱ- ԿԲԵՐԸ ԿԱԼ/Մ. Ժ. 0 C	ՄԱՎԱԼԱՅԻՆ ԿՇԻՐ ԿԲԼ	ՄԱՆՈՒԹՈՒ- Ն
Բնական բար. շինանյութ			
1. Գրանիտ	2,70—3,00	2280—3000	
2. Պորֆիրիտ	3,05	2800	
3. Դնեյս	2,94—3,31	2400—2700	
4. Բաղալու	1,47—1,55	2420—2990	
5. Տրախիտ	0,504	2180—2590	
6. Արթիկ առով լավ	0,19—0,29	750—1400	
7. Պերգա	0,075—0,20	330—590	
8. Ավաղպաքարեր	1,08—1,58	2080—2680	
9. Մարմար	1,80—2,81	2500—2840	
10. Կրաքար	1,08—1,14	1580—2800	
11. » ինցային	0,20—0,35	900—1500	
12. Կավ բըռուտային	0,65	1500—1550	
13. Շիֆեր	1,13—1,30	2600	
14. Ավագ	0,26—0,33	1400—1650	
Արհեստական շինանյութեր			
15. Աղյուս կավ հում	0,60	1775	
16. » թրծած	0,414—0,51	1620—1900	

*Տե՛ս Դ. Լ. Պիմրոտ. Определение теплопроводности строительных и изоляционных материалов, стр. 79—86.

ՆՅՈՒԹԵՐԻ ԱՆՈՒՆԸ	ԶԵՐՄԱՆՑԿՈՒ- ԹՅԱՆ ԳՈՐԾԱ- ԿԲԵՐԸ ԿԱԼ/Մ. Ժ. 0 C	ՄԱՎԱԼԱՅԻՆ ԿՇԻՐ ԿԲԼ	ՄԱՆՈՒԹՈՒ- Ն
Աղյուս սիլիկատային			
17. Աղյուս սիլիկատային		0,57—0,85	1750—1810
18. » ծակոտկեն կավային		0,20—0,30	600—1200
19. » տրեպելի		0,12—0,25	500—850
20. » » ծակոտկ.		0,078—0,10	308—450
21. » կավի ու տրեպելի		0,30	1200
22. » նույնը սնամեջ ու ծակոտ.		0,07—0,28	400—1200
23. Բանտն 1 : 7, 5 չոր		0·78	2000—2300
24. Գաղաքատոն և փրփրեատոն		0,049—0,25	300—1100
25. Պեմզա-բետոն		0,15—0,20	700—950
26. Գիպսոլիտ		0,124—0,38	700—1250
Մեկուսիչ նյութեր			
27. Ֆիբրոլիտ		0,006—0,155	250—450
28. Կամլշիտ		0,039—0,05	200—300
29. Տորֆունում		0,0316—0,057	200—400
30. Տորֆ		0,033—0,075	130—200
31. Խցան		0,033—0,042	45—130
32. Թհի		0,05—0,062	190—215
33. Թաղիք		0,03—0,063	150—270
34. Փայտի ածուե		0,048—0,056	185—215
35. Շեգելին		0,04	140—150
36. Մարողին		0,052—0,06	300—370
37. Աղբեսու		0,070—0,177	280—580
38. Դիատոմիտ		0,038—0,08	120-530 (860)
39. Շւակներ		0,13—0,14	650—1150
40. Տերմողիտ		0,072	300
Կապակցող նյութեր			
41. Կրաշաղախ		0,57—0,58	1700—1900
42. Դիպս կամ ալեբաստր		0,288—	740—1100
43. Ավագլու		0,52—0,64	2120—2220
Շինափայտ			
44. Կաղնի		0,17—0,18	720—770
		0,30—0,37	
		0,12—0,14	
45. Սոճի		0,30—0,32	480—650
		0,093	
46. Ցեղենի		0,170	420—480

ՆՅՈՒԹԵՐԻ ԱՆՈՒՆԸ	ԶԵՐՄԱՆԳԼՈՒ- ԹՅԱՆ ԳՈՐԾԱ- ԿԻՑԸ ԱՎ/Ծ °C	ԾԱՎԱԼՄԱՐԻՆ ԿՀԻՌԸ ԿԵԼ	ԾԱՆՍԲՈՒ- ԹՅՈՒՆ
<i>ՄԵՏԱՆԵՐԸ</i>			
47. Ցերկաթ	56—60	7800—7880	
48. Պողպատ	47—52	7800—7870	
<i>ՈԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹԵՐԸ</i>			
49. Ապակի	0,65—0,80	2400—2500	

Աղյուսակի մեջ բերված թվական տվյալները վերաբերում են չոր դրության մեջ գտնվող նյութերին:

Ինկատի ունենալով այն հաճամանքը, վոր շինարարական նյութերի ջերմանցկության գործակիցը, պատերի և շենքերի այլ մասերի մեջ գործադրություն ստանալու պայմաններում, վորոշ չափով տարբերվում ե լաբորատորական պայմաններում վորոշ ված նյութերի ջերմանցկության թվական մեծությունից, գործական նպատակների համար կարելի յե ոպտիկ նաև համամիութենական կառուցումների ինստիտուտի կողմից կազմված որինա- տիր դիագրամայից *.

Այդ դիագրաման տակա ե այն փոխհարաբերությունը, վորը դոյլություն ունի նյութերի ջերմանցկության գործակցի և ծա- վալային կշռի մեջ, չոր և խոնակ դրությամբ:

7. ԶԵՐՄՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ


Զերմության այն քանակը, վորն անհրաժեշտ է 1 կի- լոդրամ նյութի ջերմաստիճանը 1°C բարձրացնելու համար, կոչ- վում ե այդ նյութի ջերմունակություն:

Նյութերի ջերմունակության թվական մեծությունը կա- խումն ունի այդ նյութերի քաշից կամ զանգվածից:

Յեթե ց տառով նշանակենք վորեն նյութի կշռը կիլոդրամ-

* Այդ ենդրի մասին անու մանրամասն՝ «Եֆֆեկտիվն կրուճ». Офи- ցիաльное издание ВСНХ СССР, Союзстрой.

ներով և ո տառով նշանակենք նրա ջերմունակությունը, այդ դեպքում պահանջվող ջերմության քանակը Q, վորը անհրաժեշտ



ե տվյալ նյութի ջերմաստիճանը t_1 ⁰-ից մինչև t_2 ⁰ բաձրացնելու
համար, կլինի:

(8) $Q = c \cdot g \cdot (t_2 - t_1)$ կալորի:
Համաձայն այդ փորմուլայի նյութերի ջերմունակությունը՝

$$(9) c = \frac{Q}{g \cdot (t_2 - t_1)} = \frac{kcal}{kg \cdot {}^{\circ}C}$$

Ուրիշն, յեթե հայտնի յե նյութերի տաքացման համար
գործադրվող ջերմության քանակը (Q), նյութի կշիռը (g) և ջեր-
մության բարձրացման աստիճանը ($t_2 - t_1$), այդ գեպօւմ հեշ-
տությամբ կարելի յե վորոշել տվյալ նյութի ջերմունակությունը:

Որինակ, յեթե նյութի տաքացման համար գործադրված ե
40 կալորի ջերմություն, նյութի քաշն ե 2 կիլոգրամ, նյութի
սկզբնական ջերմաստիճանը (t_1) յեղել ե $20^{\circ}C$ իսկ վերջնական
ջերմաստիճանը (t_2) $- 100^{\circ}C$, այդ գեպօւմ նյութի ջերմունակու-
թյունը համաձայն (9) փորմուլայի կլինի:

$$c = \frac{Q}{g \cdot (t_2 - t_1)} = \frac{40}{2 \cdot (100 - 20)} = 0,25 \text{ kcal/kg} \cdot {}^{\circ}C:$$

Նյութերի ջերմունակության վորոշումը կատարվում ե կա-
տրիմետրների միջոցով, գիղիկայի մեջ ընդունված յեղանակ-
ներով:

Գործնական տեսակետից շինարարական նյութերի ջերմու-
նակության նշանակությունը կայանում ե նրանում, վոր այս-
տակությամբ բնորոշվում ե նյութերի ջերմություն կուտակելու
և պահելու ընդունակությունը:

Այն նյութերը, վորոնց ջերմունակությունը բարձր ե, իբևնց
տաքանալու կամ սառչելու համար պահանջում են շատ ավելի
յերկար ժամանակ, քան այն նյութերը, վորոնց ջերմունակու-
թյունը փոքր ե:

Նյութերի ջերմանցկության հետ միասին այս հանգաման-
քը չափաղանց կարեոր ե բնակարանների կառուցման համար
համապատասխան նյութերը ընտրելու տեսակետից, վորպիսդի այդ
նյութերից կառուցվող բնակարաններում, ձմեռ ժամանակ, ջե-
ռուցման միենույն պայմաններում, ապահովված լինի ավելի
տեսական նորմալ ջերմաստիճան:

№ 4 աղյուսակում ցույց ե տրված մի շարք շինանյութերի
ջերմունակությունը:

Աշխարհական համակարգության մասին ան մանրա-
մասն պահանջանակության մասին ան մանրա-
մասն պահանջանակության մասին ան մանրա-
մասն պահանջանակության մասին ան մանրա-

ՆՅՈՒԹԵՐԻ ԱՆՈՒՆԸ	ՋԵՐՄՈՒՆԱ- ԿՈՒԹՅՈՒՆԸ	ԾԱՆՈԲԾՈՒԹՅՈՒՆ
1. Գրանիտ	0,195	
2. Մարմար	0,21	
3. Աղաղաքար	0,22	
4. Դիպս	0,20	
5. Աղյուս	0,189—0,291	
6. Շտկներ	0,18	
7. Ֆիբրոլիտ	0,55	
8. Թեփ	0,60	
9. Խցան	0,50	
10. Թաղիք	0,45	
11. Կամիչիտ	0,36	
12. Տորֆոլիում	0,50	
13. Աղբաս	0,20	
14. Դիատոմիտ	0,20	
15. Պաղնի	0,57	
16. Սոճի	0,65	
17. Ցեղանի	0,65	
18. Չուզուն	0,13	
19. Ցերկաթ	0,114	
20. Պղինձ	0,093	
21. Ապակի	0,20	

Աղյուսակի տվյալներից յերեսում ե, վոր ջերմունակության
բարձր ցուցանիշներ են տալիս փայտեղենը և բուսական ծագութեա-
ռաբար ցուցանիշները են ամենափոքր ցուցանիշներն են
տալիս մետաղները: Բնական ծագութեան ունեցող և արհեստական
քարային նյութերը բանում են մոտավորապես միջին տեղը:

Այստեղից միանգամայն հասկանալի յե դառնում այն կարևոր
նշանակությունը, վոր հետզետե շինարարագության մեջ ստանում
են ջերմային մեկուսիչ հատկություններ ունեցող այն շինարա-
րական նյութերը, վորոնք ունենալով բարձր ջերմունակություն,
միենույն ժամանակ ձառայում են իբրև լավ շինանյութ՝ տաք
բնակարաններ ստանալու համար *:

* Ջերմունակության կիրառական նշանակության մասին ան մանրա-
մասն պահանջանակության մասին ան մանրա-
մասն պահանջանակության մասին ան մանրա-
մասն պահանջանակության մասին ան մանրա-

8. ԶԱՅՆԱՑՑԿՈՒԹՅՈՒՆ

Չայնանցկությունը շինանյութերի կարեռը հատկություններից մեկն ե, վորից կախումն ունի շենքերի մեկուսացումը շըրջապատող միջավայրի՝ փողոցի ու հարեան բնակարանների ձայնից ու աղուկից:

Ֆիզիկական փորձերի մեջոցով ապացուցված է, վոր պիճնդ ու խիտ նյութերի միջավայրում ձայնի ալիքները շատ ավելի լավ են տարածվում, քան գաղային միջավայրում:

Որինակ, ձայնի լավ հաղորդիչ են մետաղները, ապակին, բնական և արհեստական խիտ ու վոչ-ծակոտկեն քարային նյութերը:

Չայնի վաստ հաղորդիչ ե ողը. ուրեմն այն շինանյութերը, վորոնք ծակոտկեն են և ջերմանցկության-նկատմամբ ունեն մեկուսիչ հատկություններ, միենույն ժամանակ վաստ հաղորդիչ են նաև ձայնի վերաբերմամբ: Այդ տեսակետից բացառություն և կազմում փայտը, վորը հակառակ իր ծակոտկեն բջիջային կազմության և լավ ջերմային մեկուսիչ հատկությունների, ընդհակառակը տալիս ե ձայնանցկության բարձր ունակություն, ըստ վորում փայտի ձայնանցկության աստիճանն ավելի բարձր ե թելիկների ուղղությամբ, կամ ըստ յերկայնության, քան ըստ լայնության:

Բացի այդ, փայտերի խիտ ու պիճնդ տեսակներն ավելի ձայնանցիկ են, քան թույլ տեսակները:

Չայնի մեկուսիչ նյութերի թվում առաջնակարգ տեղ երունում փափուկ ուստինը և ապա խցանը, վորի ձայնանցկությունը քիչ ե տարբերվում ողից, և շնորհիվ իր այդ հատկության, մամլած սալերի և լինոլեումի ձևով գործադրությունն և ստանում շինարարության մեջ հատուկ դեպքերում, իրը և ձայնի մեկուսիչ:

Գետք և նկատեր վոր ընդհանրապես նյութերի ձայնանցկության խնդիրը կիրառական տեսակետից շատ քիչ ե ուսումնասիրված և գեռես նյութերի ողտագործումը ձայնանցկության նկատմամբ կատարվում և տվյալ վայրում մասսայական շինարարության մեջ ընդունված յեղանակով, անկախ այն արդյունքներից, վոր տալիս են այդ ձեր կառուցվածքները:

Ժամանակակից բազմաբնակարան ու բազմահարկ շենքերի կառուցման պայմաններում, համապատասխան շինանյութերի ընտրությունն ըստ ձայնանցկության դառնում և անհրաժեշտու-

թյուն, մանավանդ միջնապատերի ու միջնարկային ծածկերի համար պահանջվող նյութերի նկատմամբ:

Այդ խնդրի գործնական լուծումը պետք է կատարվի համապատասխան փորձերի միջոցով, լայն գործադրություն տալով տեղական ծագումն ունեցող այլ և այլ շինարարական նյութերին, ինչպիսիք են պեմզայի կաղնուկը, դիտոմիտը, տաք բետոնները, թաղիքը և այլ նման նցութերը, իսկ հատուկ դեպքերում նաև խցանը և ուստինը:

6. ՈԴԱՆՑՑԿՈՒԹՅՈՒՆ

Ոդանցկություն կոչվում է նյութերի՝ իրենց միջով ող անցկացնելու հատկությունը, վորը պայմանավորվում է այդ նյութերից շինված պատերի հակադիր կողմերում քամու կամ այլ գործուների շնորհիվ առաջացող ողի ճնշման արբերությամբ:

Նյութերի ողանցկության աստիճանը վորոշելու համար իրրի չափանիշ ծառայում է ոդանցկության գործակիցը, վորը ցույց է տալիս, թե ինչ քանակությամբ, այսինքն քանի լիտր ող և անցնում 1 ժամվա ընթացքում 1 մետր հաստություն և 1 ժառ մետր մակերես ունեցող նյութի միջով, յեթե ողի ճնշման արբերությունը այդ նյութից շինված պատի հակադիր կողմերում կազմում է 1 մմ ջրասյուն:

Վորմե նյութից շինված պատի միջով անցնող ողի քանակը ուղղի հարաբերական և տվյալ նյութի ոդանցկության գործակցին, պատի՝ մակերեսին, ժամանակի մեղքությանը և ողի ճնշման արբերությանը պատի հակադիր կողմերում, և հակառակ հարաբերական և այդ պատի հաստությանը:

Այդ հարաբերությունն արտահայտվում է հետեյալ ֆորմուլայով՝

$$(10) \quad L = m \frac{\Phi F (p_1 - p_2) T}{a},$$

վորտեղ Լ տառով նշանակված և ողի քանակը լիտրերով, m —նյութի ոդանցկության գործակիցն ե, F —պատի մակերեսը քառ մետրերով, $p_1 - p_2$ —ողի ճնշման արբերությունն և պատի հակադիր կողմերում, T —ժամանակի մեղքությունն ե և a —պատի հաստությունը:

Այդ (10) գործությամբ հիման վրա վորոշվում են յութերի ողանցկության գործակիցը՝

$$m = \frac{F}{(p_1 - p_2)} T \quad (11)$$

Նյութերի ողանցկության գործակիցը ու յուրաքանչյուր նյութի համար ներկայացնում են բնորոշ մեծություն և իր առանձնահատկություններով վորոշ չափով նման են ջերմանցկության գործակիցն, միայն հակառակ մտքով:

Որինակ, այս նյութերը, վորոնց ծավալային կշիռը փոքր և ծակոտկենության աստիճանը բարձր, ընդհանուր առամբ անշերմանցիկ են, մինչդեռ ողանցկության նկատմամբ տալիս են բարձր ցուցանիշներ և ընդհակառակ:

Սակայն նյութերի ծակոտկենության ազգեցությունը նրանց ողանցկության վրա չի կատարվում այնպիսի համեմատականությամբ, ինչպես այդ տեղի յեւ ունենում նյութերի ջերմանցկության նկատմամբ:

Այդ առաջ են գալիս նրանից, վոր հաճախ նյութերի ծակոտիները իրենցից ներկայացնում են փակ բջիջներ, վորոնք միանցամայն տարբեր կերպով են անդրադառնում նրանց ջերմանցկության և ողանցկության վրա:

Նյութերի ողանցկության գործակիցը կախումն ունի հետեւ գործուներից՝

1. Ծակոտիների կազմությունից: Այն նյութերը, վորոնց ծակոտիները միջանցիկ են, տալիս են ողանցկության ավելի բարձր գործակից, քան այն նյութերը, վորոնց ծակոտիները ունեն փակ բջիջային կազմություն:

Որինակ, թեև խեցաքարի ծակոտկենության աստիճանը ավելի պակաս ե (40%), քան ծակոտկեն կավային աղյուսի ծակոտկենությունը (50%), ընդհակառակը խեցաքարը, չնորհիվ միջանցիկ ծակոտիների, տալիս ե ողանցկության ավելի բարձր գործակիցն ե 1:

2. Նյութերի ողանցկության գործակիցի թվական մեծությունը կախված է նրանց խոնավության աստիճանից: Խոնավությունը և նրանք ողի համար գառնում են անթափանցիկ:

Որինակ, սովորական աղյուսի ողանցկության գործակիցը

չոր գրությամբ = 0,80, 6% խոնավության գեպքում = 0,55, իսկ 18% խոնավության գեպքում = 0*:

Այդ հանգամանքն անհրաժեշտ են կատար ունենալ ծակոտկեն նյութերից շենքեր կառուցելիս, վորպեսզի նրանց ծակոտկենության հետ կապված արժեքավոր հատկությունները պահպանված լինեն խոնավությունից պաշտպանվելու միջոցով:

Գործնական ահամակետից շինանյութերի ողանցկության նշանակությունը կայանում են րանում, վոր չնորհիվ այդ հատկության վորոշ չափով ապահովությունը են բարող շենքերից կատարվող շենքերի բնական ողափոխությունը: Սակայն պատերի միջով կատարվող բնական ողափոխությունը, շնորհիվ նյութերի ծակոտկենության, մեծ չի կարող լինել այլապես այդ ողափոխությունը կարող ե ունենալ բացասական ազդեցությունը բնակարանների ողի ջերմաստիճանի վրա. ուստի ծակոտկեն նյութերի գործադրության գեպքում՝ կառուցվող պատերի հաստությունը վորոշում են, ինկատի ունենալով նրանց ջերմանցկության պայմանները՝ անկախ ողանցկությունից:

Ընդհանրապես նյութերի ողանցկության գործակիցի նկատմամբ հատուկ մշակված նորմաներ գոյություն չունեն և այս հատկության վորոշումը կատարված ե շատ քիչ գեպքերում:

Շինանյութերի ողանցկության վորոշումը անհրաժեշտ ե գլխավորապես հեղղուցիչ գազերից պաշտպանվելու համար ապաստարաններ կառուցելիս:

Այդ վորոշումը կատարվում ե հատուկ գործիքների միջոցով:

Փորձի եյությունը հետևյալն ե. սալիկաձև, փորձի յենթակա նյութի յերկու հակադիր կողմերում արհեստական յեղանակով ստեղծվում են իրարից մեկուսացված, տարբեր ողի ճնշում ունեցող տարածություններ: Այսուհետեւ անընդհատ պահպանվող ողի վորոշ ճնշման տարբերության շնորհիվ սալիկի մեկ կողմից ողը սկսում ե անցնել նրա միջով մյուս կողմը**:

Ինկատի ունենալով անցնող ողի քանակը, փորձի տեղությունը, սալիկի մակերեսն ու հաստությունը և ողի ճնշման տարբերությունը, (11) փորմուլայի միջոցով վորոշում են նյութի ողանցկության գործակիցը:

* Скрамтаев Б. Г. Введение в курс строительных материалов, стр. 43.

** Փորձի սկարագրությունը տես prof. B. G. Скрамтаев Введение в курс строительных материалов, стр. 42—43.

10. ՆՅՈՒԹԵՐԻ ԼԱՅՆԱՑՈՒՄԸ ԶԵՐՄՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՏԱԿ

Ինչպես հայտնի յե ֆիզիկայից, նյութերը ջերմության աղդեցության տակ լայնանում են:

Նյութերի լայնացումը կարող է լինել գծային, կամ ըստ յերկարության և ըստ ծավալի:

Տարբեր նյութերի լայնացումը տաքացման հետևանքով տարբեր և լինում այլ խոսքով, ամեն մի նյութ ունի իր լայնացման գործակիցը:

Գծային լայնացման գործակից (ա) կոչվում է մեկ միավոր յերկարություն ունեցող նյութի յերկարության ավելացումը նրա շերմաստիճանը ըստ $C = 1^0$ բարձրանալու գեղքում:

Որինակ, յերբ ասում են, թե պողպատի գծային լայնացման գործակիցը $= 0,0000124$, այդ նշանակում է, վոր 1 մետր յերկարություն ունեցող պողպատի ձողը տաքացնելիս շերմաստիճանի բարձրացման յուրաքանչյուր մեկ աստիճանում տալիս է $0,0000124$ մետր յերկարության ավելացում:

Նյութի յերկարացումը նրանց շերմաստիճանի բարձրացման հետևանքով արտահայտվում է հետեւյալ ֆորմուլայի միջոցով՝

$$e = a \cdot t \quad (12),$$

վորտեղ է տառով նշանակված է մարմնի յերկարության ընդհանուր ավելացումը, 1 — նյութի սկզբնական յերկարությունն է, ա — գծային լայնացման գործակիցը և t — մարմնի սկզբնական ուժերջնական շերմաստիճանների տարբերությունը:

Այս (12) ֆորմուլայի հիման վրա նյութերի լայնացման գործակիցը կլինի:

$$a = \frac{e}{t} \quad (13):$$

Ծավալային լայնացման գործակիցն ստանալու համար պետք է գծային լայնացման գործակիցը բաղմապատկել յերեքի վրա՝

$b = 3 \cdot a$: վորտեղ b — նյութերի ծավալային լայնացման գործակիցն է:

Ենանյութերի տվյալ հատկության նշանակությունը կածագրություն ստացող նյութերը յերմության աղղեցության տակ տալիս են վորոշ լայնացում: Այդ լայնացումն իր հերթին, կառուցման վրոշ պայմաններում կարող է ունենալ քայլքայիչ աղղեցություն: ուստի յերբեմն անհրաժեշտ է լինում հաշվի առ

նել գործադրվող նյութերի լայնացման աստիճանը և ըստ այնմ համապատասխան կոնստրուկտիվ միջոցառումներով ապահովել կառուցումների կայունությունը:

Որինակ, յերկարությունը ուղարկում են իրարից վորոշ հեռավորության վրա, վորպեսզի ջերմության աղղեցության տակ լայնանալիս ուղարկու իրար չսեղմեն և չծռվեն:

Ներքեւ № 5 աղյուսակում ցույց են տրված մի շարք շինանյութերի ջերմային լայնացման գործակիցները:

Այդ աղյուսակից յերևում են, վոր ընդհանրապես շինանյութերի ջերմային լայնացման գործակիցները մեծ չեն:

Մետաղները տալիս են լայնացման ավելի բարձր գործակից, քան քարային նյութերը:

ԱԴՅՈՒՍԱԿ № 5

	ՆՅՈՒԹԵՐԻ ԱՆՌԻՆՆԵՐԸ	ԼԱՅՆԱՑՄԱՆ ԳԾԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԻՑԸ
1.	Գրանիտ	{ 0,0000085 0,000009
2.	Բաղալու	0,00001
3.	Կայծաքար	{ 0,000009 0,000012
4.	Ավաղաքար	{ 0,0000065 0,0000095
5.	Մարմար	{ 0,000008 0,000011
6.	Կրաքար	0,0000104
7.	Դոլոմիտ	0,000008
8.	Շեֆեր	0,000010
9.	Աղյուս կավի թրծած	0,0000110
10.	Բետոն	0,00001235
11.	Չուզուն	0,0000124
12.	Ցերկաթ դլանած տեսակը	0,0000086
13.	Պողպատ	{ 0,00000872 0,0000077
14.	Աղակի	0,0000033
15.	Կաղնի ըստ յերկարության	0,0000143
16.	Ցեղենի ըստ յերկարության	0,000009
17.	Ցեղենալ	

11. ՀՐԱԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ

Հրակայունություն կոչվում են յուլթերի այն հատկությունը, վորի շնորհիվ այդ նյութերը դիմանում են բարձր ջերմաստիճանների աղղեցության և պահում են իրենց ֆիզիկական դրությունը:

Այդ հատկությունը կարեռ նշանակություն և ստանում այնպիսի գեղքերում, յեթե գործադրվող նյութերը դանվելու յենթարձր ջերմաստիճանը աղղեցության տակ: Բացի այդ, նյութերից վոմանք հրդեհի գեղքում կարող են քայլացնել կամ կորցնել իրենց նախկին ամրությունն ու դիմացկանությունը:

Հրդեհի պայմաններում առաջացող ջերմաստիճաններին դիմանալու հատկությունը կարեռ և մանավանդ պատերի և միջհարկային ծածկերի վրա գործադրվող նյութերի համար:

Նյութերի քայլացումը կարող է կատարվել տարրեր ջերմաստիճանների պայմաններում, վորը հետեւանք՝ և այդ նյութերի ներքին կաղմության, նրանց քիմիական բաղադրության և ֆիզիկական հատկությունների:

Որինակ, նյութերից վոմանք, ինչպիսին են՝ մարմար, կրաքար և գոլոմիտը, կարող են քայլացներում, վորը հետեւանք՝ և այդ նյութերի ներքին կաղմության, նրանց քիմիական բաղադրության և ֆիզիկական հատկությունների:

Այն բնական քարային նյութերը, վորոնք բաղկացած են տարրեր ահսակի խոշոր բյուրեղային միներալներից, բարձր ջերմաստիճանի աղղեցությամբ տալիս են ճեղքվածքներ, շնորհիվ այդ բաղադրիչ միներալների լայնացման գործակիցների տարրերության:


Բարձր ջերմաստիճանների տակ շինանյութերից շատերը փափկում և ապա հալվում ու կորցնում են իրենց ձևը: Այդ հանդամանքը կարեռ և մանավանդ հալոցային վառարանների համար նյութեր ընտրելիս:

Նյութերի հրակայունության վորոշումը կատարվում և հատուկ հնոցներում, վորոնք հնարավորությունն են տալիս ստանալ պահանջվող ջերմությունը և հետեւ նյութի արտաքին դրության փոփոխմանը:

Այդ գործողությունը կատարվում է հետևյալ յեղանակով: Փորձի յենթակա նյութը, վորին տալիս են կանոնավոր ձև, տեղի ջերմաստիճանը մինչև նյութի քայլացնելը են հնորաշի ջերմաստիճանը կարելի յետքորդում կամ հալվելը: Հնորաշնական նպատակների համար շատ հաճախ ոգտվում են Հեղերի կոներով:

Զեղերի կոներն իրենցից ներկայացնում են տարրեր քիմիական բաղադրություն ունեցող յեւանիստ փոքրիկ բուրգեր, վորոնք համարակալված են և վորոնց հալման ջերմաստիճանը նախորոք հայտնի յիւ:

Այդ կոների միջոցով հնոցի ջերմաստիճանը վորոշելու համար դնում են հնոցի մեջ միքանի տարրեր համար ունեցող կոներ, վորոնցից վոմանք, շնորհիվ իրենց հալման ցածր ջերմաստիճանի, հնոցի ջեռուցման վորոնշ շրջանում հալվում են. մյուսները միախան ծովում են ավելի կամ փոքր չափով: Փորձի վորոշ ժամանակամիջոցում հնոցի ջերմաստիճանը համապատասխանում է այն կոնի հալման ջերմաստիճանին, վորի գագաթը ծովի լին հասնում և մինչև հատակը: Տես նկար 8:



Նկ. 8

Զեղերի կոները առաջ ստացվում եյին Գերմանիայից Ներկայումս այդպիսի կոներ պատրաստվում են նաև կենինգրադի մենապակու գործարանում: Ներքեց բերգող և աղուսակում ցույց են տրված կենինգրադի դորձարանում պատրաստված կոների համարները

և զուգընթաց նրանց հալման ջերմաստիճանը*:

Իսկ և 7 աղուսակում բերված են միքանի շինանյութերի հալման ջերմաստիճանները:

12. ԴԻՄԱՑԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Դիմացկանությունը նյութերի այն հատկությունն է, վորի շնորհիվ նրանք ընդդիմադրում են հողմանարմանը, այսինքն այն դիմացկանություններին, վորոնք կատարվում են մթնոլորտի աղղեցիկությունը տեղի ունեցող այլ և այլ մեխանիկական և քիմիական պրոցեսների հետեւանքով:

Այդ պրոցեսներին մասնակցող գլխավոր գործոններն են.

1. Ողի բարեխառնության կամ ջերմաստիճանի տատանումները, մանավանդ սառնամանիքները:

* Տես պրոֆ. Պ. Ս. Փիլոսօֆ. Строительные материалы, стр. 39.

Ա Դ Յ Ա Խ Ս Ա Կ Հ 6

Կոնկրետ Հ. Ա.	Հայլման Հերմաստիճան								
022	600	011	880	1	1100	13	1380	25	1670
021	650	010	900	2	1110	14	1410	26	1690
020	670	09	920	3	1140	15	1435	27	1710
019	690	08	940	4	1160	16	1460	28	1730
018	710	07	960	5	1180	17	1480	29	1750
017	730	06	980	6	1200	18	1500	30	1770
016	750	05	1000	7	1230	19	1520	31	1790
015	790	04	1020	8	1250	20	1530	32	1825
014	815	03	1040	9	1280	21	1580	33	1850
013	835	02	1060	10	1300	22	1600	34	1880
012	855	01	1080	11	1320	23	1610	35	1920
				12	1350	24	1650	36	1960
								37	2000

Ա Դ Յ Ա Խ Ս Ա Կ Հ 7

ՆՑՈՒԹԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ	Հայլման Հերմաստիճանը ըստ Ը	Ծանոթու- թյուն
1. Բաղալտ		
2. Արթիկ-տուֆ-լավա	1300—1400	
3. Պիմզա	1100—1120	
4. Կվարց	1300—1400	
5. Դաշտային սղաթ	1730	
6. Կվարչիտ	1200	
7. Դոլորժիտ	1680—1730	
8. Մագնեզիտ	2200	
9. Կառին	2160—2400	
10. Կավ բրուսային	1500—1780	
11. Աղբեսա	1110—1400	
12. Շակներ	1500	
13. Աղյուս կավե թրծած	1100—1200	
14. Կիր սղային չմարած	1150—1300	
15. Ասֆալտ	3000	
16. Ասֆալտ գուտըսնային	150	
17. Չուզուն	80—130	
18. Ցերկաթ ձուլտծո	1150—1250	
19. Պողպատ	1350—1600	
20. Ակակի	1300—1400	
	1200—1400	

3. Անձրևն ու ջուրը:

3. Քամիները:

4. Որդանիզմների գործունեյությունը:

5. Ողբ և իր մեջ գանվող դանազան գաղային նյութերը:

Ողի ջերմաստիճանի տատանումների հետևանքով ապառների հոգմահարումը կամ քայքայումը տեղի յի ունենում շնորհիվ նրանց բազագրիչ մասերի և ներքին ու արտաքին ջերտերի անհամաչափ տաքանալու և ստոչելու:

Այդ աղղեցությունն ավելի ինտենսիվ և լինում, յերբ ջերմաստիճանների տատանումները մեծ են: Որինակ, յերբ արևի ձառագայթներին հետեւում են անձրևներն ու գիշերվա սառնամանիքները, արդ գեղգում, շնորհիվ քարային նյութերի բաղադրիչների մինչերացման մեջ առաջ լի տարբեր ջերտերի անհամաչափ լայնացման ու սեղմման, նրանց մեջ առաջ են գալիս ճեղքվածքներ:

Ավելի քայքայիչ աղղեցություն ունեն ապարների դիմացկանության վրա սառնամանիքները: Այդ աղղեցությունը պայմանավորվում է ջրի ծագալի ավելացմամբ, վորը տեղի յի ունենում նրա հեղուկ դրությունից պինդ սառուցային դրության անցնելիս:

Ջրի սառեցման հետևանքով քայքայման կարող են յենթարկել այն ապարները, վորոնք ունեն ջերտավոր կամ ծակոտկեն կազմություն, կամ աննկատելի ճեղքվածքները:

Ջուրը ծծվելով այդ ապարների ծակոտիների ու ճեղքվածքների մեջ, սառչելու դեպքում լայնանում և հաճախ պատռում ու քայքայում և նրանց:

Սակայն ջրի քայքայիչ աղղեցությունն անդրադառնում է վոչ բոլոր ծակոտկեն նյութերի վրա: Որինակ, խիստ ծակոտկեն արթիկ-տուֆ-լավան, կամ նորհրդային Հայաստանում լայն գործադրություն ունեցող այլ շինարարական տուֆերը, հարյուրավոր տարիների ընթացքում շենքերի վրա յենթակա լինելով ծծված ջրերի ցրտահարման աղղեցությանը, վոչ մի քայքայման նշան ցույց չեն տալիս և չեն կորցրել իրենց կայուն ամրությունը:

Ցերեր նյութերի ծակոտիները ճագեցած են ջրով վոչ-լրիվ չափով, այդ դեպքում լայնացող սառուցայի տարածվում է մասնաւոր կությունների մեջ, սառնաց նկատելի քայքայումներ առաջ բերելու, վորովհետեւ ջուրը սառչելիս տալիս և լայնացում իր սկզբնական ծագալի մոտավորապես 0,1-ի չափով, ուստի այն ապարները, վորոնց դաշտարկությունների մինչև 0,9 մասն և

հագեցած ջրով, սիսականորեն պետք ե համարվեն սառնակայուն (մօրօստօյկան): Սակայն համաձայն պրոֆ. Կ. Պրեկլիկի-տվյալների, ապարները սառնակայուն են, յերբ նրանց հագեցման գործակիցը 0,8 չի անցնում, այսինքն՝ յերբ զատարկությունների ծավալի միայն 0,8 մասն ե ջրով կշտացած*:

Եինայութերի սառնակայությունը ստանում ե կարևոր նշանակություն այնպիսի գեղքերում, յերբ նրանք գործադրություն են ստանում կառուցուների դրսի մասերում և յենթակայեն խոնավության ու սառնամանիքի աղղեցությանը, ինչպես որինակ՝ պատերի յերեսվածքի, կամը ջակալների և այլ նման դեպքերում:

Եյութերի սառնակայունությունը վորոշվում է լարորատորական փորձարկման միջոցով: Այդ փորձի հյությունը հետևյալն է. փորձարկվող նյութի նմուշը հագեցվում է ջրով և ապա յենթարկվում և սառեցման՝ 17° մինչև՝ 22° Ծերմաստիճանի տակ**: Սառչելուց հետո, վորը տեսում է 3—4 ժամ, նյութի նմուշը դնում են նորմալ (10° — 20° Ծ) ջերմաստիճան ունեցող ջրի մեջ 2—3 ժամ, մինչեւ սառույցի հալվելը, և ապա այդ նույն փորձը կրկնում են 25 անգամ: Յուրաքանչյուր անգամ, յերբ հալեցնում են սառույցը, զննում են նմուշը՝ քայլքայման նշանները հայտնաբերելու համար:

Եյութը համարվում է սառնակայուն, յերբ նա 25 անգամ սառեցնելու դեպքում չի տալիս ճեղքվածքներ և այլ քայլքայման նշաններ:

Սովորաբար նյութի նմուշին տալիս են խորանարդի ձև, վորը սառեցման փորձից հետո յենթարկվում է լրացուցիչ ճընշաները պարզելու համար:

Հիշյալ փորձը հաջողությամբ կարելի յե դնել ձմռան ամիսներին, յերբ ոդի ջերմաստիճանն իշնում է մինչև՝ 17°:


Փորձը կարելի յե կատարել նաև արհեստական սառեցուցիչ խառնութերի ոգնությամբ, այդ նպատակի համար հարմար հատուկ գործիքների միջոցով:

№ 9 նկարը իրենից ներկայացնում է պրոֆ. Ն. Ա. Բեկյառսկու գործիքը նյութերի սառնակայունությունը վորոշելու համար, վորելությունը պարզ յերեսում և այդ նկարից:

Իբրև արհեստական սառեցուցիչ խառնություն սովորաբար վերցնում են 2 մաս ջարդած սառույց և մեկ մաս աղ, վորը հնարա լորություն և տալիս ստանալու՝ 17° մինչև՝ 20° Ը:

Ճիշտ արդյունքներ ստանալու համար անհրաժեշտ ե, վորապես պարզի փորձարկվող նյութը բավականաչափ կշտացած լինի ջրով:

Այդ նալատակով պրոֆ. Կ. Պրեկլիկը առաջարկում է հետևյալը. այն փորձնական նմուշները, վորոնք վերցրված են ջրային կառուցումների, կամ առանձնապես դուրս ընկած ճարտարապետա-



Նկ. 9

կան մասերի (քիվերի և այլն) համար գործադրություն ստացող նյութերից, հագեցման համար պետք ե պահել ջրի մեջ 30 որ, հիմքերի և ցոկուների շինանյութերի նմուշները պահել 3 որ, մնացած դեպքերում՝ 12 ժամ*:

Եյութերի սառնակայունությունը վորոշելու վերոհիշյալ փորձը համարվում է հիմնական միջոցներից մեկը նյութերի դիմացկանությունը հողմանարման գործոնների նկատմամբ պարզելու համար, վորովհետև այս փորձի միջոցով միաժամանակ վորոշվում է նաև այդ նյութերի ընդդիմադրությունը՝ ոդի ջերմաստիճանի տատանումների հետևանքով նրանց մեջ առաջացող քայլքայմանը: Ինչպես արդեն հիշված ե, նյութերի դիմացկանությունը մեծ մասամբ հետևանք է նրանց կազմության կամ

* Տե՛ս պրոֆ. Կ. Տերցար. Ինժեներական գեոլոգիա, стр. 323.

** Տո- же, стр. 325.

ստրուկտուրային: Զերմաստիճանի տատանութերի նկատմամբ համեմատաբար կայուն և դիմացկուն են խիտ, մանր բյուրեղային և միատարր կազմություն ունեցող ու միագույն ապարները:

Բարձրակառակը, նյութերի շերտավորումն ու աննկատելի մաղային ճեղքվածքները պատճառ են գառնում այդ նյութերի հողմահարմանն ու քայլայմանը և կանխորոշում են նրանց դիմացկանությունը:

Ուստի, անկախ սառնակայունության վերոհիշյալ փորձից, նյութերի դիմացկանությունը վորոշ չափով կարելի յե պարզել նաև նրանց կազմության առանձնահատկությունները հայտնաբերելու միջոցով:

Այդ վորոշումը կատարվում է ներկման միջոցով, ընկղմելով և յերկար ժամանակ թողնելով նյութերի չորացրած նմուշները ներկող լուծույթների մեջ:

Այս յեղանակով շատ պարզ կերպով յերեան են գալիս բոլոր աննկատելի ճաքերը, շերտավորումներն ու ծակոտիները, վորոնք ներկի շնորհիվ ստանում են ավելի մուգ գունավորում:

Փորձարկման համար գործ են ածվում հետեւյալ ներկերը.

1. 4% ային նիզորդինի լուծույթը ալկոհոլի մեջ.

2. Մետիլենի կապույտի, բերլինի լազուրի և մանգան-թթվուտային կալիումի լուծույթները ջրի մեջ և այլն *:

Բացի զերմաստիճանի տատանութերի ու սառնամանիքների հետևանքով առաջացող նյութերի քայլայումից, շինարարության պայմաններում նրանց դիմացկանության վրա ազդեցուն ունեցող հողմահարման կարեռ գործուների թվին են պատկանում ջուրը և ողն ու իր մեջ գտնվող այլ և այլ գազային նյութերը:

Դիմացկանություն տեսակետից ջրի ազդեցությունը նյութերի վրա կայանում է հետեւյալում.—Ջրի մեջ կարող են լուծվել ապարների մեջ գտնվող բաղադրիչների վոմանք, մասնավոր այն դեպքում, յերբ այդ ջուրն իր մեջ պարունակում է այլ անորգանական կամ օրգանական թթվուտներ, վորոնք կարող են ընկնել ջրի մեջ ողից կամ հողից:

Որինակ, յեթի ջուրն իր մեջ պարունակում է ածխաթթու (CO_2), այդ դեպքում նրա մեջ վորոշ չափով լուծվում է կրաքարը, վորի հետեւանքով կրաքարը և կրաքար պարունակող ապարները կարող են յենթարկվել քայլայման:

* Տես պրոֆ. Կ. Տերցար. Ինժեներական գեոլոգիա, ստ. 314.

Նմանապես քայլայիչ ազդեցություն են ունենում կալցիում-կարբոնատ (Ca CO_3) պարունակող ապարների վրա այն ջրերը, վորոնց մեջ գտնվում են լուծված դրությամբ H_2SO_4 , HCl և այլ թթվուտներ:

Որինակ, ծծմբաթթուն կրաքարի հետ տալիս է հետևյալ ռեակցիան՝ $\text{H}_2\text{SO}_4 + 2\text{H}_2\text{O} + \text{CaCO}_3 = \text{CaSO}_4 \cdot 2\text{H}_2\text{O} + \text{CO}_2$ HCl -ը տալիս եւ $\text{CaCO}_3 + 2\text{HCl} = \text{CaCl}_2 + \text{H}_2\text{O} + \text{CO}_2$ և այլն:

Որի ազդեցությունը նյութերի դիմացկանության վրա հիմնականում կայանում է թթվածնի թթվեցնող ներգործության մեջ:

Որի մեջ գտնվող թթվածնինը (O) քիմիապես քայլայիչ կերպով և ազդում ապարների մեջ հանդիպող ծծմբային միացությունների վրա և այլն:

Որինակ, հրաքարը (FeS_2), վորը յերբեմն պատահում է շինարարական քարային ապարների մեջ, թթվածնի քիմիական ներգործության շնորհիվ տալիս եւ յերկաթոքսիդի հիդրատ ($2\text{Fe}_2\text{O}_3 \cdot 3\text{H}_2\text{O}$) և ծծմբաթթու, վորն իր հերթին կարող է ունենալ քայլայիչ ազդեցություն նույն ապարների մեջ գտնվող այլ միներալների վրա: Նման քիմիական քայլայիչ ներգործություն կարող են ունենալ ապարների դիմացկանության վրա նաև ողի մեջ գտնվող գազային խառնուրդները՝ SO_2 և CO_2 , վորոնցով առանձնապես հարուստ ելինում արդյունաբերական շրջանների ողը, շնորհիվ գործարանական ծինելույզներից դուրս յեկող ծխի, վորն արագ կերպով տարածվում է խառնվում եւ շրջապատող ողի հետ: Շինանյութերի դիմացկանությունը ջրի և այլ գազային գործուների՝ O , SO_2 և CO_2 -ի քիմիական ներգործության նկատմամբ վորոշ Սեյզալի յեղանակով: Փորձը կատարվում է հետեւյալ ձեղում և Սեյզալի գործարկով: Փորձը կատարվում է կշռված նմուշը, վորը վով: Փորձարկվող նյութի չորացրած և կշռված նմուշը, վորը պատրաստվում է $70 \times 30 \times 8$, 5. մմ մեծություն ունեցող սալիկի ձևով, հագեցնում են ջրով և պլատինի թելի մեջոցով կախում են ձևողական գազերը գործիքի միջից հեռացնելու համար: Տես նկար 10:

Նյութի քիմիական կայունությունը վորոշելու նպատակով նյութի գործիքը միջոցով գործիքի բաց և թողնվում գործիքի մեջ վորոշ արագությամբ CO_2 և O , իսկ հետո նաև SO_2 :

55

Դործիքի միջով անցնող գազերը հայլաքում են քանակը վորոշելու համար: Յուրաքանչյուր անդամ գազերը փոխարկելիս, փորձարկվող նյութի սալիկը միքանի անդամ ընկղմում են ջրի մեջ նորից բարձրացնում են: Փորձը տեսում է մոտավորապես 9 որ, վորից հետո սալիկը հանում են դուրս, լվանում են և ապա չուղացնում են ու նորից կշռում:



Նկ. 10

Ճարտարապետական գազարանքների մեջ տարրի սալիկը պարզելու քարային նյութերի դիմացկանության աստիճանը: Այս փորձարկումներն անհրաժեշտ են կարաբել նոր, դեռևս գործի մեջ չփորձված զինարարական նյութերի վերաբերմաբ: Որինակ նորհրդային հայաստանի մի շարք վաշրելում հայտնաբերված են տուֆոզեների մեծ պաշար արտաքին տեսքի և գեղեցիկ գույների թերևս կարողանային գարերանքների գործադրությունը քարհանքեր, վարոնք շնորհիվ իրենց գարանքին պատճենական գործակիցը: Վերաբերած հնարավորություն են տալիս պարզելու քարային նյութերի դիմացկանության աստիճանը: Այս փորձարկումներն անհրաժեշտ են կարաբել նոր, դեռևս գործի մեջ չփորձված զինարարական նյութերի վերաբերմաբ: Որինակ նորհրդային հայաստանի մի շարք վաշրելում հայտնաբերված են տուֆոզեների մեծ պաշար արտաքին տեսքի և գեղեցիկ գույների թերևս կարողանային գարերանքների գործադրությունը:

Ինչ վերաբերում է շինարարության մեջ տարրեր անսակի յին նյութերին, վորոնց վերաբերմաբը շինարարությունն ունեցող քարաբերական գազարանքների համար: Վեն համապատասխան փորձարկման, և միմիայն դրական արթյունների դեպքում կարող են ունենալ պատշաճ գործադրու-

թինակ, Խորհրդային Հայաստանում այդպիսի շինարարական քարերի թվին են պատկանում բաղալտները, գրանիտը, անդեղիտները, տրախիտները, տուֆերը, արթիկ-տուֆ-լավան և այլն. Նմանապես գործնական փորձի միջոցով մասամբ արդեն պարզված են Ծաթերի գեղեցիկ վարդագույն քարի թույլ սառնակայունությունը:

Շնորհիվ իր այդ հատկության, Ծաթերի քարը, վոր առաջին անդամ գործադրված են յեղել Յերևանի միքանի շենքերի յերեսացման համար, միայն մեկ ձմեռվա ընթացքում տեղաբեկ մկնել ե քայքայվել և կտոր-կտոր թափկել:

Փորձերի բացակայության պատճառով առայժմ դժվար ե տալ վորևե բացատրություն այդ քայքայման պատճառների մասին: Հստյերեսույթին պատճառը նրա շերտավոր կաղմությունն ե կամ անհկատելի ճաքերը, վորոնք առաջ են դալիս այդ քարի արտաքերման ժամանակ՝ շնորհիվ նրա բեկուն հատկության:

13. ԱՄՐՈՒԹՅՈՒՆ

Նյութերի ընդդիմանալու ունակությունը արտաքին մեխանիկական ճիգերին կոչվում է ամրություն:

Կառուցումների մեջ շինարարական նյութերի մեծագույն մասը գտնվում է վորոշ բեռնվածության տակ և յենթարկվում է տարբեր մեխանիկական ճիգերի կամ ուժերի ազդեցությանը —

ճշշման

ճգման

ծուման և

ճղման կամ հատման:

Շինարարության գործնական պայմաններում ամենից շատ մենք գործ ենք ունենում ճշշման և մասամբ ճգման ու ծուման ուժերի ազդեցության հետ, ուստի և շենքերի կայունությունն ունակատառումներով, բավականանում ենք գիսավորապահովելու նկատառումներով, գրականանում ենք գիսավորապես ճշշման ու ճգման ընդդիմագության չափերի վորոշումներով:

Հիշյալ ուժերի նկատմամբ նյութերի ընդդիմագության թվական մեծությունները վորոշելու համար իրեն միավոր չափա-նիշ ընդունված ե նութի 1 լուս մի հատվածքի վրա ազդող բեռնագածության չափը կիրագաններով, վորը արտահայտվում է հեղածության մեջ՝ կիրագաններով, առաջ առաջ կիրագաններով:

Ուրեմն, յեթե նյութը յենթարկված է վորևե բեռնվածու-

թյան, որինակ՝ ճնշման, և յիթե այդ նյութի ճնշման ընդդիմաց դրությունը կազմում է 120 կիլոտոն սմ, այդ նշանակում է, վոր նյութը մինչև իր քայլքայման աստիճանին հասնելը կարող է վերցնել իր 1 տոռ ամ մակերեսի կամ հատվածի վրա 120 կիլո գրամ ծանրություն, վորը և կազմում է տվյալ նյութի ճնշման ժամանակավոր բնդիմաղրությունը:

Սակայն նյութերի ամրությանը վերաբերող այս բնորոշունյութերին, վորոնք մեխանիկական ճիգերի աղղեցության տակ տալիս են քայլքայման պարզ ու նկատելի նշաններ:

Կան նաև այլ տեսակի շինանյութեր, ինչպես, որինակ, մեքանիկը վորոնք շնորհիվ իրենց մածականության, նախքան քայլքայլվելը յենթարկվում են վորոշ ձևափոխման: Այդպիսի դեպքարում նյութերի ամրության աստիճանը վորոշում են, յելսելով նիրի ժամանակավոր ճնշման ընդդիմաղրության նկատմամբ իրենց առանձնահատկություններից: Այսպես, որինակ, մետաղամրության գործնական չափանիշ ծառայում է նրանց հոսունունույն անփոփոխ բեռնվածության տակ, յենթարկվում է վորոշ տականը, այսինքն, յերբ տվյալ մետաղը, գտնվելով միեւ ձևափոխման, առանց վորեն նկատելի ընդդիմաղրություն ցույց տալու:

Ա. ՃՆՇՄԱՆ ԸՆԴՀԻՄԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Նյութերը ճնշման են յենթարկվում հետեյալ դեպքերում:
1. յերբ նրանք դրված լինելով ամուր հիմքի վրա, զտնվում են վորեն ծանրության ուժի աղղեցության տակ: Տես նկար 11:

Կամ 2. յերբ նրանք յենթարկվում են իրենց առանցքին զուգահեռ, հալասարապես բաշխված և հանդիպական ուղղությամբ գործող շուժերի աղղեցությանը: Տես նկար 12:


Նյութերի ճնշման ժամանակավոր ընդդիմաղրությունը վորոշում է այդ նպատակի համար հարմարեցրած հիմքավիլկական ժամուների միջոցով, մինչև 500 տոռն կարողությամբ:

Այդ նպատակով փորձի յենթակա նյութից պատրաստվում են խորանարդի ձևունեցող նմուշներ, վորոնք դրվում են մուլի տակ և յենթարկվում են աստիճանաբար աղղեցությանը:

Բեռնվածքի ամուրությունը մասմուլի վրա հարմարեցրած

հատուկ մանումետրի միջոցով: Այնուհետև, ինկատի ունենալով փորձարկվող նմուշի մակերեսը և բեռնվածքի թվական մեծությունը, վորոշում են տվյալ նյութի ճնշման ընդդիմաղրությունը:

P



Նկ. 11

Նետեյալ գործություն՝ $R = \frac{P}{F}$ կիլոտոն սմ, վորակի R տառով նշանակված և նյութի ճնշման ժամանակավոր ընդդիմաղրությունը կիլոտոն սմ, P—ճնշող ուժի կամ բեռնվածքի չափը կերպամներով և F—ճնշման մակերեսը քառակուսի սանտիմետրներով:

Որինակ, յեթե գործարկման նմուշի մակերեսը կազմում է 50 քառ. սմ և այդ նմուշը մինչև իր քայլքայման աստիճանին հասնելը կարողացել է վերցնել 1250 կիլո ծանրություն, այդ դեպքում տվյալ նյութի ճնշման ժամանակավոր ընդդիմաղրությունը կլինի:

$$R = \frac{P}{F} = \frac{1250}{50} = 25 \text{ կիլոտոն սմ:}$$

Ներքեր № 13 նկարում ցույց է տրված շինանյութերի ճնշման ընդդիմաղրությունը վորոշելու համար գործադրվող մամուլ ներքի մեկը:

Այս փորձի միջոցով ճիշտ արդյունքներ ստանալու համար անհրաժեշտ են հետեյալ պայմանները:

1. Փորձի յենթակա նյութի նմուշները պետք է պատրաստել սղոցելով և վոչ մուրճով, վորոշենել նյութը մուընով տաշելիս նմուշների վրա կարող են առաջ գալ աննկատելի ճեղքվածքներ, վորոնք կարող են անդրադառնալ տվյալ փորձի որդյունքների վրա:

2. Նմուշների ճնշման յենթակա մակերեսները պետք է տրամադան լինեն իրար զուգահեռ և միանգամայն հարթ, վորպեսզե փորձի ընթացքում մամուլի միջոցով տրվող բեռնվածությունը հավասարապես բաշխվի նյութի բոլոր կետերի վրա:

3. Փորձի ընթացքում ճնշման ավելացումը նմուշի վրա պետք է կատարվի աստիճանաբար: Հստ Գրենգի * բեռնվածքի

* Տես պրոֆ. Կ. Տերցան. Ինժեներական գույքը, ս. 317.

ավելացման թույլատրելի արագությունը համարվում է 10 կիլ/քառ մմ՝ 1 վայրկյանում:

4. Փորձը պետք է կատարել չոր և ջրով հագեցրած թաղ նմուշների վրա առանձին, վորովհետև նյութերը թաց զրությամբ տալիս են միանգամայն տարբեր ու ավելի թույլ արդյունքներ:



Նկ. 12

Նում և շրջան, մյուսը—քառակուսի և խրբորդ—յեռանկյունի փորձելիս տալիս են իրարից տարբեր ճնշման ընդդիմադրություն հետեւյալ հարաբերությամբ:

$1 : 0,93 : 0,86$

Նմուշի ամենից ուցինալ ձեւ համարվում է գլանը, վորի տրամագիծը և բարձրությունն իրար հավասար են:


Ընդհանրապես նմուշների բարձրությունն զգալի աղդեցություն և ունենում փորձի արդյունքների վրա: Յեթև նմուշը բարձրությունը հիմքի արամագծից մեծ է, այդ դեպքում նյութի ընդդիմադրությունն ստացվում է ավելի պահան, և ընդհանակառակը, կարճ նմուշները տալիս են ավելի բարձր ընդդիմադրություն:

* Տես պրոֆ. Կ. Տերցաց, Ինженерная геология, стр. 316.

** Տես պրոֆ. Դեմետիև, Технология строит. мат., стр. 33.

Հեշտ պատրաստելու նպատակով, սովորաբար նմուշներին տալիս են խորանարդի ձև:

Նայելով փորձարկման յենթակա նյութերի ամրությանը խորանարդիկները պատրաստվում են տարբեր մեծության:



Նկ. 13

Ամուր նյութերի համար, վորոնց ճնշման ընդդիմադրությունը 1 քառ սմ վրա 750 կիլոգրամից բարձր է, նմուշների չափը վերցնում են $5 \times 5 \times 5$ սմ, միջին ամրության նյութերի համար 250—750 կիլ/քառ սմ վերցնում են $7 \times 7 \times 7$ սմ և թույլ նյութերի համար— $10 \times 10 \times 10$ սմ:

Նյութերի ճնշման վերոհւյալ փորձի միջոցով ինչպես արդեմ ասված է, վորոշվում է նյութերի ընդդիմադրությունը:

Միանգամայն պարզ է, վոր կառուցութերի մեջ շինանյութերի բեռնվածությունը չի կարելի հասցնել մինչև նյանց ժամանակակից մեջ:

մանակավոր ընդգիմադրության կամ այլ խստքով՝ մինչև քայլքայ-
ման աստիճանը:

Շենքերի կայունությունը քանդկելուց ապահովելուն կատար-
ումով, պատերի և այլ ծանրություն կրող կառուցվածքային մա-
սերի համար գործադրվող նյութերի նկատմամբ ընդունում են փորոշ
ամրության գործակից, վորը ցույց է տալիս բեռնվածքի թույ-
լատրելի չափը: Թույլատրելի բեռնվածության նկատմամբ ընդուն-
ված պահունի ամրության անհրաժեշտությունը բացատրվում է
նրանով՝ 1. վոր նյութերն իրենց կազմությամբ միատեսակ չեն
և այդ պատճառով ամրության նկատմամբ կարող են տալ չափա-
զանց միծատանումներ:

Որինակ, մինույն քարհանքից վերցրած նմուշները մեծ
մասամբ իրենց հատկությամբ տարրեր են լինում, նայելով թե
հանքի վրա տեղից և բնական շերտավորման համեմատությամբ
ինչ ուղղությամբ են կտրված այդ նմուշները:

2. Մթնոլորտի գործոն ուժերի ազդեցության տակ նյութերից
վորանք են կորցնել իրենց ամրության վորոշ մասը:

3. Փոփոխական բեռնվածության պայմաններում նյութերը
հայտնարերում են վորոշ հոգնածություն և կորցնում են իրենց
սկզբնական ամրության աստիճանը:

Ամրության գործակիցները տարրեր նյութերի համար տար-
րեր են: Բնական քարային նյութերի նկատմամբ ընդունված ամ-
րության գործակիցները կազմում են նրանց ժամանակավոր ընդ-
դիմագրության $\frac{1}{10}$ — $\frac{1}{40}$, նայելով կառուցվածքի ընույթին:

Կառուցման նորմալ պայմաններում թույլատրելի բեռնվա-
ծությունը վերցնում են տվյալ նյութի ժամանակավոր ընդդիմա-
գրության $\frac{1}{20}$ չափով:

Ամենապարզ կառուցումների գեպօւմ վերցնում են $\frac{1}{10}$ -ը,
իսկ բացառիկ գեպերում, ինչպես, որինակ՝ ցնցումների ու այլ
նման պայմաններում $\frac{1}{40}$:

Սովորական և տաք բետոնների համար վերցնում են ժամա-
նակավոր ընդդիմագրության $\frac{1}{5}$ և այլն:

Բ. ԶՄԱՆ ԸՆԴԳԻՄԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Զգելու ժամանակ նյութերի կողմից ցույց տրվող ամենամեծ
ընդդիմագրությունը մինչև նրանց խցումը կոչվում է ձգման ընդ-
դիմագրություն:

Նյութերը ձգման են յենթարկվում, յերբ նրանք գտնվում են
յերկու հակառակ ուղղությամբ գործող ուժերի ազդեցության
տակ: Տես նկար 14:



Նկ. 14

Նյութերի ձգման ընդդիմագրությունը վորոշ
վում է զանազան խզող գործիքների ոգնությամբ.
Ն 15 նկարն իրենից ներկայացնում է Ամսլիրի
խղող մեքենայի արտաքին տեսքը, վորն աշխա-
տում է հիգրավլիկ ուժի միջոցով:

Գործիքն ունի յերկու ճապուռ, վորոնց մեջ
ամրացնում են փորձի յենթակա նյութերի նմուշ-
ները և ապա հիգրավլիկ պոմպի միջոցով աս-
տիճանաբար հեռացնելով իրարից ճապուռները,
հետզհետե ձգում են նմուշը մինչև նրա խզումը:

Խզան վրա գործադրված ձգող ուժի թվական
մեծությունը ցույց է տրվում մեքենայի վրա
հարմարեցրած մանոմետրի միջոցով:


Այսուհետև տվյալ նյութի ժամանակավոր
ընդդիմագրությունը 1 քառ. սմ վրա վորոշվում
է, բաժանելով ձգող ուժի թվական մեծությունը
նրա ընդլայնական հատվածքի մակերեսի վրա
հետեւյալ փորձություն: $Z = \frac{P}{F}$, վորտեղ Z տա-
ռություն նշանակված է խզման ժամանակավոր ընդ-
դիմագրությունը, P—գործադրված ուժի թվական
մեծությունը կիրագրամներով և F—նմուշի ընդ-
լայնական հատվածքը քառակուսի սանտիմետր-
ներով:

Որինակ, յեթե նյութի խզման համար գործադրված է, համա-
ձայն մանոմետրի ցուցմունքի, 320 կիլ, իսկ նյութի ընդլայնա-
կան հատվածքի մակերեսը կազմում է 16 քառ. սմ, այդ գեպօւմ
նրա ձգման ժամանակավոր ընդդիմագրությունը կիրակ՝

$$Z = \frac{P}{F} = \frac{320}{16} = 20 \text{ կիլ/քառ. սմ}$$

Գորգեսպի ձգման փորձի ժամանակ կարելի լինի նախա-
տեսել խզման տեղն ու նրա մակերեսը, նմուշներին տալիս են
համապատասխան ձև:


Հստ Հիբշվալդի, քարային նմուշներին տրվում են նկար № 16-ու ցույց տրված ձևը: Կապակցող նյութերի գործնական նմուշները պատրաստվում են ութածն: առ նկար № 17:



Նկ. 15

Փայտե ու մետաղե նմուշներին տալիս են № 18 նկարում ցույց տրված ձևը: Ինչպես ճշշման փորձի դեպքում, ճգման դեպքում ես անհրաժեշտ ե տարրերել թաց ու չոր նմուշները և գո-

բոշումը, չորացրած ու ջրով հագեցրած նմուշների վերաբերմամբ, կտտարեկ առանձին:



Նկ. 16



Նկ. 17

Փորձի արդյունքների վեց նմանապես մեծ ազդեցություն ե ունենում այն հանգամանքը, թե բնական դրության մեջ գտընդ վազ նյութի վեր տեղից և ինչ ուղղությամբ և վերցրված նմուշը

ԾՐԱՄԱՆ ՅԵՎ ՀԱՏՄԱՆ ԸՆԴԴԻՄԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Նյութերի ծաման ու հատման ընդդիմադրությունները շինարարության գործնական պայմաններում սովորաբար փորձարկման չեն, յենթարկվում, ուստի այդ փորձերի նկարաղությունը այսաեղ չի տրվում:

Անհրաժեշտ դեպքերում ոգտվում են նյութերի ընդդիմադրության մեջ ընդունված տեսական ու գործնական ուսումնասիրության մեթոդներով:


Ինչպես արդեն ասված է, կառուցումների մեջ ամրության տեսակետից ամենամեծ նշանակությունն ունի շինանյութերի ճընշման ընդդիմադրությունը:

Զգման, ծոման և հատման ընդդիմադրությունները ճնշման համեմատությամբ ներկայացնում են փոքր թվական մեծություններ:

Փորձեր են կատարված այդ ընդդիմադրությունների մեջ վորոշ համեմատականություն սահմանելու վերաբերմաբ, սահմանագրված է, զոր ընդդիմադրության տարրեր տեսակների մեջ ճիշտ հարաբերականություն գոյություն չունի:

Համենայն դեպք, համեմատելով նյութերի և ընդդիմադրությունները, կարելի յետանալ մոտավոր պատկերացում այդ ընդդիմադրությունների փոխադարձ հարաբեռությունների մասին:

Ըստ Բառշինգերի՝ քարային շինանյութերի ճպաման ընդդիմադրությունը կազմում է ճնշման ընդդիմադրության $\frac{1}{30}$ — $\frac{1}{20}$ ։ Ճոման ընդդիմադրությունը կազմում է ճնշման ընդդիմադրության $\frac{1}{9}$ — $\frac{1}{6}$, իսկ հատման ընդդիմադրությունը ճնշման ընդդիմադրության $\frac{1}{16}$ — $\frac{1}{14}$ *:



Նկ. 18

* Схема проф. К. Дементьев, Технология строительных материалов, стр. 31.

Ներքեւ Հ 8 աղուսակում տրվում են շինարարական նյութերի ճնշման և ձգման ընդդիմադրությունները:

Ա.Դ.ՅՈՒՍԱԿ Հ 8

ՆՅՈՒԹԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԻ	ԾԱԿԱՆ ԺԻՆԱՆՅՈՒԹՆԵՐ	ՃՆՇՄԱՆ ԲՆԴ-ԴԻՄԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԲԼ/ՔԱՌ ԱՄ	ՃԳՄԱՆ ԲՆԴ-ԴԻՄԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲԺՈՒՆՆԵՐԸ ԿԲԼ/ՔԱՌ ԱՄ	ՄԱՆՈՒԹՅՈՒՆ
1. Գլանիտ	450—2700	20—52		
2. Պրֆիլիտ	700—3000	56		
3. Սիենիտ	800—2000	—		
4. Դիորիտ	750—2900	50		
5. Քնեյս	480—2760			
6. Բաղալա բնական	800—4570			
7. Դիաբազ	800—2750	50		
8. Բաղալա ձուրածո	5700—9000	300		
9. Տրամիտ	360—2600	23—37		
10. Անգեղիտ	500—900	—		
11. Արթիկ տուփ լաքա	80—135			
	ՏՈՒՓԵՐ ՑԵՐԵՎԱՄԻ ՀՐՀԱՆԻ			
12. Տուփ Ավանի	193/200	—		
13. » Դալմայի	108/94	—		
14. » Զըվեմի (հին քարհանք)	82, 8/50, 7	—		
15. » (նոր քարհանք)	187/156	—		
16. » Կըլլարի	195/61	—		
17. Գեմդա Հայաստանի	15,5—50, 9	—		
18. Ավաղաքար կվարցային				
19. » Կըլլարին	240—1900	—22		
20. » Կավայիին				
21. Կըլլարցիտ	1120—2700	—		
22. Մարմար	350—2000	50		
23. Կըլլաքար	390—2080	4, —52		
24. » Խեցային	14—50—200	—		
25. » Անգեղելային	470—1650	26—36		
26. Դոլոմիտ	870	20		
27. Շիֆեր	600—1700			
	Արհեստ. շինանյութեր			
28. Աղյուս կավե հում	8—10	—		
	80 չորր			
29. » » թրծած	60 թացը			
	120 չորր			
30. » » սիլիկատային	90 թացը			

Աղյուսակի
առաջին թվերը
գերազանցում են կարման առաջին թվերին
2-րդը սեղման առաջին թվերին:

ՆՅՈՒԹԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ		Ճաշման ընդ- դիմագրու- թյունները կելքառ սմ	Ճաշման ընդ- դիմագրու- թյունները կելքառ սմ	Մանրթու- թյուն
31.	Աղուս	ծակոտկեն կավային	20—80	—
32.	»	տրեպելի	60—110	—
33.	»	տրեպելի ծակոտկեն	5—10	—
34.	»	կալի ու տրեպելի	62—72	—
35.	»	նույնը ծակոտկեն	3—60	—
36.	Բետոն 1 : 7 : 8	170—210	14—17	28 որից հետո
37.	Գազաբետոն և փրփրաբետոն	7—40	—	
38.	Գեմզաբետոն	28,8—40,8	—	
39.	Գիլառլիտ	—	10—20	
40.	Քալիոլիտ	740—900	35—140	
Մեկուսիչ նյութեր				
41.	Ֆիբրոլիտ	3,5—11	—	
42.	Տորֆուռում	4,61	—	
43.	Աղբեստ	—	150—300	կելմմ ²
44.	Շակներ	20—2500	—	
45.	Կերամիտ	20—22	—	
Կապակցող նյութեր				
46.	Կրաշաղախ 1 : 4	6	2	
47.	Բարձրորակ ցեմենտ	420	55	բյունը ցաւց ե- րևած 28 որից հետո
48.	Բուման ցեմենտ 1 : 3	135	18	
49.	Պորտլանտ ցեմենտ	160—270	35—45	
50.	Բուկսիտային ցեմենտ	1080	80	
51.	Գիպս կամ ալերաստը	40	10	7 որից հետո
52.	Անհիդրիտային ցեմենտ	150	40	
Շինարար. Փայտ				
53.	Կաղնի	350—660	650—1080	
54.	Հաճարի	380—570	700—1100	
55.	Սոճի	230—490	690—1050	
56.	Ցեղնի	280—460	602—750	
Ծին. յերկաթ				
57.	Զուգուն	6000—8500	1200—2400	
58.	Ցերկաթ ձուլմածո	2000—3000	3400—5000	
59.	Գողպատ ձուլմածո	3000—6000	4000—10000	
Ոժանդակ նյութեր				
60.	Աղուս	1500—6000	250	

14. ԱՌԱՋԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Նյութերի այն հատկությունը, վորի շնորհիվ նրանք, արտաքին ուժերի աղղեցությունը վերանալուց հետո, ընդունում են իրենց նախկին չափնութեալ կամ կոչվում ե առաձգականություն:

Առաձգականությունը մեծ կամ փոքր չափով հատուկ է բոլոր նյութերին, սակայն առանձնապես ուժեղ արտահայտություն և գտնում մետաղների ու փայտեղենի նյութերի մեջ:

Ծնորհիվ ուժեղ արտահայտված առաձիկ հատկության, շինարարական փայտի ու յերկաթեղենի ընդդիմագրությունը արտաքին մեխանիկական ճիգերի աղղեցությանը կատարվում է ուղղույն ձևով, վորը մանրամասնորեն քննության և առնվում նյութերի ընդդիմագրության մեջ. ուստի փայտի ու յերկաթեղենի գործագրության դեպքում, նրանց ընդդիմագրության վորոշումը և կառուցումների կայուն ամրության վերաբերող հաշվարկությունը սովորաբար շինանյութերի տեխնոլոգիայի քննարկմանը չեն յենթարկվում, այլ կատարվում են նյութերի ընդդիմագրության մեջ ընդունված յեղանակով:

15. ԱՐԾՐՈՒԹՅՈՒՆ

Կարծրությունը նյութերի այն հատկությունն է, վորի շնորհիվ նրանք ընդդիմանում են սեղմող նյութերի ներարկմանը կամ տապալվորմանը: Վորեւ մի նյութ մյուսից կարծը և, յերբ նա խաղում է մյուս ավելի թույլ նյութի վրա:

Այդ հատկությունը վորոշ դեպքում ունի չափազանց խոշոր գործնական նշանակություն: Որինակ, քարային նյութերի արտաքրման ու նրանց մեքենայական մշակման համար պահանջվող գործիքների համեմատական կարծրությունն ստանում ե առանձին նշանակություն այդ պլրոցեսների կատարման տևողության և արժեքի տեսակետից:

Նմանապես գործազրություն ստացող քարային նյութերի կարծրությունից ե կախված զգալի չափով մայթերի ու սալահատելիների դիմացկանությունն ու մաշվելու ընդդիմագրությունը:

Նյութերի կարծրությունը վորոշելու համար գեռնս մշակված միանման ստանդարտ միջոցներ չկան:

Մետաղների կարծրությունը մեծ մասամբ վորոշվում է Բըինելի յեղանակով, վորի նյությունը հետևյալն է. հղկված փորձարկվող նյութի մակերեսի վրա վորոշ ուժի ազդեցությամբ սեղմում են մխման յենթարկված պողպատի գնդակի միջոցով. չորհիվ գնդակի կարծրության, նյութի հարթ մակերեսի վրա ստացվում ե փոս ընկած հնոք, վորի մեծությունը ընորոշում է այդ նյութի կարծրության աստիճանը:

Քարային նյութերի կարծրության աստիճանը վորոշելու համար սովորաբար այդ նյութերը համեմատում են այնպիսի նյութերի հետ, փորոնց կարծրությունը պայմանական կերպով ընդունվում է իրեն չափանիշ:

Համեմատության համար ոգտվում են Մոռսի կարծրության սանդղակով, վորը բաղկացած ե ըստ կարծրության 10 տարրեր միներալներց: Տես աղօնուակ Հ: 9:

Աղօնուակ Հ: 9

Միներալների Անոինները	Կարծրության ցուցանիշները	Ծանոթություն
Տալկ	1	Խաղվում են
Քարաղ կամ գեպս	2	յեղունկով
Կալցիտ	3	Խաղվում են
Ֆլուորիտ	4	պողպատե գանակով
Ապատիտ	5	
Որթոկլազ	6	
Կվարց	7	Ինքը խաղում ե գանակը
Տոպազ	8	
Կորունդ	9	Խաղվում և կարում են
Ալմաստ	10	ապակին

Այս յեղանակով նյութերի կարծրությունը վորոշելիս համեմատում են նրանց Մոռսի սանդղակի մեջ հիշված միներալների հետ՝ իրար վրա խաղելու միջոցով:

Որինակ, յեթե փորձի յենթարկվող նյութը խաղում ե ապատիտի վրա, իսկ ինքը՝ խաղվում է որթոկլազով, այդ դեպքում նրա կարծրությունը գանվում է 5 և 6-ի մեջ:

Այս վորոշումը նյութերի համար ունի համեմատական նշա-

նակություն: Քարային նյութերի կարծրության աստիճանը քանակային արտահայտությամբ վորոշվում է Մարտենսի յեղանակով, սկզբում ետք կոչվող գործիքների միջոցով:

Փորձի եյությունը կայանում է նրանում, վոր փորձարկվող նյութի վրա խաղումը կատարվում է վորոշ ծանրության տակ գոնզող սրածայր ալմաստի միջոցով:

Այդ դեպքում, ամրության աստիճանի համար իբրև քանակային չափանիշ ծառայում ե ալմաստի վրա գրվող ծանրությունը, վորը արտահայտվում է զբաններով:

Սակայն պետք է ինկատի ունենալ վոր քարային նյութերի կարծրության վորոշման այս պարզ ձևերը կարող են տալ համեմատաբար ճիշտ արդյունքներ միայն միտարր և պարզ նյութերի վերաբերմամբ, կամ այնպիսի բարդ նյութերի, վրոնք ունին իրաստ մանրանատիկ ու խիստ կազմություն:

Այս յեղանակով չի կարող վորոշվել այն քարային նյութերի կարծրությունը, վորոնք ունեն բարդ միներալային կազմություն:

Որինակ, յեթե այդ նյութերը կազմված են տաքրեր կարծրություն ունեցող խոշոր բյուրեղներից:

Այսպիսի նյութերի կարծրության մասին կարելի յե գաղափար կաղման նրանց մաշվելու ընդիմադրությունը վորոշելու միջոցով:

16. ՄԱՇՎՈՂՈՒԹՅՈՒՆ

Նյութերը մաշվում են՝ յերբ նրանք շփումն են ստանում այլ նյութերի հետ:

Այս հատկությունը գործնական նշանակություն ունի գըլխալորապես ճանապարհային շինարարության մեջ, ինչպես, որին նակ՝ սալահատակների ու մայթերի վրա գործադրվող նյութերի վերաբերմամբ, նաև այն նյութերի, վորոնք գործադրություն են ստանում շենքերի հատակների, սանդուխների ու նման պայմաններում գտնվող կառուցվածքային մասերում:

Նյութերի մաշվողության ընդդիմադրությունը պայմանավորվում է՝

1. շփվող նյութերը իրար սեղմող ուժերի մեծությամբ,
2. շփվող նյութերի կարծրության տաքրերությամբ,
3. շփվող մակերեսների գրությամբ (նայած՝ չոր են, թե քոված):

Իսկ բնական քարային նյութերի մաշվողությունը պայմանավորվում է նաև

1. այդ քարերը կազմող բաղադրիչ միներալների կարծրությամբ,

2. բաղադրիչ միներալների կարծրությամբ և նրանց կապակցության ամրության աստիճանով,

3. բաղադրիչ միներալների հատիկների մեծությամբ ու նրանց փոխադարձ դասավորությամբ:

Ներկայումս ընդունված ձեռվ՝ շինարարական նյութերի մաշվողության աստիճանի վորոշումը ունի համեմատական նշանակություն: Այդ վորոշումը կատարվում է հետևյալ յեղանակով:

Փորձարկվող նյութի խորանարդածե նմուշը վորոշ ծանրությամբ սեղմում են պտավող չուգունե սկավառակի հարթության վրա: Ծոորհիվ ստացվող շիման, նմուշը մաշվնում է կորցնում և իր կշիռը: Այնուհետև, ինկատի առնելով նյութի կշռի պահապահը սկավառակի վրա վորոշ տարածություն անցնուց հետո, վորոշում են տվյալ նյութի մաշվելու ընդդիմադրությունը:

Սովորաբար նյութերի մաշվողությունը վորոշում են ըստ ծավալի, հետեւյալ փորձությունը՝

$$K = \frac{g_1}{r} \quad \text{խոր սմ, փորտիդ K տառով նշանակված}$$

և նյութի մաշվողությունն ըստ ծավալի, g_1 տառով — կշռի պահապահը և 1 տառով — նյութի ծավալային կշիռ:


Այս փորձի կատարման համար մեծ մասամբ գործադրում են Բեմեյի կամ Բառչինդերի բոլորակները (կրց), վորոնց կառուցվածքը հիմնված է նույն սկզբունքների վրա:

Տարբերությունը կայանում է սկավառակների մեծության մեջ. բայց այդ, Բառչինդերի բոլորակը տալիս է միաժամանակ փորձարկվող նյութի ու համեմատության համար իրեն միավոր չափանիշ (ետալոն) ընդունված նմուշի մաշվողությունը: Մինչդեռ Բեմեյի բոլորակը տալիս է միայն նմուշի մաշվողության աստիճանը:

Նկար № 19-ը ներկայացնում է իրենից Բեմեյի բոլորակը:

Այս գործիքի վրա նյութերի մաշվողության վորոշումը կատարվում է այսպիսում:

Փորձարկման յինթակա նյութի խորանարդածե նմուշը, վորոշը մաշման մակերեսը = 50 քառ. սմ, դնում են սկավառակի վրա, վծակի տակը հարմարեցրած տեղում: Լծակի ազատ ծայրում դըրվող ծանրոցի միջոցով նմուշը սեղմում են սկավառակի վրա 30 կիլ ծանրությամբ:



Նկ. 19


Նմուշի տակը լցնում են 20 գր նաժդակի վոշի և բոլորակը դնում են պառատավոր շարժման մեջ: Յուրաքանչյուր 22 պտույտից հետո նմուշի տակը նորից լցնում են 20 գր նաժդակ և բոլորակը նորից դնում են շարժման մեջ:

Վորակեալի նմուշի մաշվումը կատարվի հավասարաչափ, ամեն

անգամ 22 պտույտից հետո նմուշը նույն հարթության վրա զբջում է 90°: 110 պտույտից հետո նյութի նմուշը հանում և կշռում հաս Այնուհետև, դարձալ 110 պտույտ տալով բոլորակին, նյութի նմուշի հետ կրկնում են նույն գործողությունը:

Այս գործողությունը 4 անգամ կրկնվուց հետո վերցնում են ամբողջ փորձի ընթացքում փորձարկվող նյութի տված պահապարզի գումարը և վերոհիշյալ փորձուալայի միջոցով վորոշում են նյութի մաշվողությունը ըստ ծավալի:

Խճուղիների համար գործադրվող խիճի (պեսեն) համեմատական կարծրությունը և մաշվողության աստիճանը վորոշելու համար գործադրվում է Դեվալի գործիքը, վորը բաղկացած է 2 թեք դրված գլանաձև թմբուկներից: Տես նկար 20:



Նկ. 20

Այդ թմբուկներից մեկի միջլցնում են փորձարկվող նյութի ըլացված ու չորացրած նմուշը 5 կիլ, իսկ մյուս թմբուկի միջնույն քանակությամբ իրրև չափանիշը ընդունված նորմալ խիճ:

Վորոշակության պտույտից հետո խիճի 2 նմուշներն ել նորից լվանում, չորացնում և կշռում են:

Փորձարկման հետևանքով նմուշների կշիռների մեջ ստացվող պահանջող հնարավորություն և տալիս պարզել փորձարկվող խիճի համեմատական կարծրությունն ու նրա գործնական պիտանիության աստիճանը:

Հետո աղյուսակում տրվում է շինանյութերի կարծրությունն ու մաշվողությունը ըստ ծավալի:

Ա. Դ Յ Ո Ւ Ա Կ Հ 10

ՆՅՈՒԹԵՐԻ ԱՆՈՒՆԵՐ	Կարծրությունն ըստ Մուսի	Մաշվողությունը 440 պառայ- տից հետո	Ծանոթու- թյունը լոր սր պտույտից հետո
1. Գրանիտ	6-7	3,74-8,3	
2. Պրֆլերտ	6-7	6,8	
3. Սիենիտ	5-6	3,5-10	
4. Դիարիտ	5-6	3,5-7,0	
5. Քարյո	6-7	2,8-4,3	
6. Բազալտ	5-6	4,30-7,30	
7. Դրաբաղ	5-6	-	
8. Բազալտ ձուլածու	-	0,6 մ/1000 պտույտից հետո	
9. Տրամիտ	6-7	-	
10. Անդենիտ	6-7	-	
11. Արթիկ սուֆ լավա	2-3	-	
12. Տուֆ Ավանի		-	
13. » Դալմայի	2-3	-	
14. » Ջրվեժի		-	
15. » Կավարի		-	
16. Կվարց	7	-	
17. Դաշտային սպատ	6	-	
18. Փայտաբ	2-3	-	
19. Յեղշերափայլ	6	-	
20. Կվարցիտ	7	1,85-4,33	
21. Ավաղաքար կվարցային	Կախված և ցեմենտով նյութի տեսակից	7,4-61,7	
» կրային	ու բանակից	7,0-36,3	
» կավային	ու բանակից	10,2-36,0	
22. Մարմար	3	—	
23. Կրաքար	3	—	
24. Դոլոմիտ	3,5-4	—	
25. Մագնեզիտ	4-4,5	6,2	
26. Շիֆեր	5,5	—	
27. Դիատոմիտ	3,0-3,5	—	
28. Ազբեստ	1,5-2	—	
29. Գիպսոլիտ	6-7	19,8	
30. Քաղլուխ	—	23,4	
31. Ասբոլիտ	—	3,29	
32. Մետրախյան սալիկներ	—	17,32	
33. Բետոն և բետոնի սալիկներ	7-7,5	—	
34. Բոկսիտային ցեմենտ	1-2	անհան և	
35. Ասֆալտ	—	5,85	
36. Կաղնու պարկետ	6	11,60	
37. Ապակի	—	6,71	
38. Ճենապակի	—		

ՄՇԱԿՄԱՆ ԸՆԴՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Բնական քարային շինարարական նյութերի մշակվելու ընդունակությունը կարեռ նշանակություն և ստանում այդ նյութերի գործադրության տնտեսական նպատակահարմարությունը վրոշելու տեսակետից:

Լեռնային ապարների մշակման ընդունակությունը կախված է՝ զլիսավորապես նրանց կաղմության առանձնահատկություններից, — մածականության աստիճանից, բաղադրիչ մինհրաների կարծրությունից ու այդ միներաները ցնմանառող նյութերի ամրությունից:

Նյութերի մշակվելու ընդունակությունը գեռևս նորմավորաման յենթարկված չեւ և ամեն մի առանձին դեպքում, այդնյութերի մշակելիության աստիճանը վորոշելիս, սպորաբար զեկավարվում են նրանց նկատմամբ յեղած հաճախ վոչ ճիշտ գործնական տվյալներով:

Այս հանգամանքը կազմում է քարային շինանյութերի նպատակահարմար ոգտագործման թերի կողմերից մեկը, վորը չի տալիս հարավորություն այդ նյութերի արտաքիրման ու վերամշակման պրոցեսները նպատակահարմար յեղանակով մեքենայացման յենթարկելու և համապատասխան աշխատանքային նորմաներ մշակելու:

Ենդհանուր առմամբ լեռնային ապարներն ըստ իրենց մշակվելու ընդունակության բաժանվում են 2 մեծ՝ խմբի՝ կարծր և փափուկ:

Սակայն պետք է ինկատի ունենալ, վոր հաճախ նորյասիկ համանուն քարերը, շնորհիվ իրենց առաջացման առանձնահատկությունների, մշակման նկատմամբ ներկայացնում են զգալի տարբերություններ։ Դորձնական նպատակների համար կարելի յեւ հատուկ փորձեր դնել փորձի միջցով պարզել քարային նյութերի վորոշ քանակության արտաքիրման ու մշակման համար պահանջվող ժամանակամիջոցն ու բանվորական ձեռքերի քանակը և ըստ այնմ չափավորման յենթարկել այդ նյութերի մշակման վերաբերող աշխատանքները և վորոշել մշակման նպատակահարմար միջոցները։

18. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՔԸ ՅԵՎ ՎՈՂՈՐԿՄԱՆ ԸՆԴՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Բնական շինարարական քարերի համար արտաքին տեսքը և գույնը ստանում են առանձին կարեռություն գեկորատիվ հարտարապետական նպատակների համար։

Քարերի գույնը պայմանավորվում է բաղադրիչ միներալների և կողմնակի գունավոր նյութերի առկայությամբ։

Ժամանակի ընթացքում քարերից շատերը որի և լույսի աղողեցության տակ փոխում են իրենց գույնը։

Այդ հանգամանքը պետք է ինկատի ունենալ շենքերի համար յերեսվածքի նպատակով քարերի ընտրություն կատարելիս։

Նմանապես կարեռ նշանակություն ունի թե զեկորատիվ և թե այլ ճարտարապետական նպատակների համար քարերի վորկման ընդունակությունը։

Վողորկում կոչվում է նյութերի այն հատկությունը, վորի շնորհիվ նրանք, վորոշ մշակման հետևանքով, ստանում են հարթ և փայլուն տեսք։

Վողորկում կարող են ստանալ գլխավորապես միավագաղ կազմություն ունեցող, մանրահատիկ և խիտ նյութերը։ Որինակ, լավ վողորկում են ընդունում մարմարը, կոնգլոմերատը, գրանիտը, ալերաստը, գիարազը, զիորիտը, սերպինտինը, պորֆիրները և այլ նման կազմություն ունեցող նյութերը։

Ընդհակառակը, վոչ միապաղապակ և ծակոտկեն նյութերը հղելուց հետո վողորկում չեն ընդունում և ստանում են փայլատեսք։ Որինակ՝ տուֆերը, ավագաքարերը, տրախիտը, կավային նյութերով կապակցված ապարները չեն վողորկում։

Քարերի և այլ նյութերի վողորկման ընդունակությունը վորոշվում և վողորկիչ մեքենաների միջոցով։

Թե ինչպես և կատարվում քարերի վողորկումը, այդ մասին մանրամասն բացատրություն կարվի սույն ձեռնարկի շրջանում։



ամբարտակ—плотина
ամբություն—крепость
անոթ—сосуд
ապար—порода
առաձգականություն—упругость
առտիճանավորված—градуированный
ա աղան—ճ և ի
ավազաքար—песчаник
արտաքրում—добыча
արտադրական աշկանք—отходы производства
բեկուն—хрупкий
բեռնվածք—нагрузка
բյուրեղ—кристалл
բոլորակ—круг
բրոտային—гончарный
գործիք—прибор, инструмент
գործակից—коэффициент
գործոն—фактор, активный
գիմացականություն—прочность
գուբը քնի—вытеснить
զանգված—масса
ընդդիմադրություն—сопротивление
թաղիք—войлок
թացություն—влажность
թթվեցնող—окисляющий
թրոք ջուր—дестилированная вода
թույլատրելի բեսնվածք—допускаемая нагрузка
թրում—обжиг
ժամանակավոր ընդդիմադրություն—временное сопротивление
ինքնարժեք—себестоимость
լուծույթ—раствор
խառնուրդ—смесь
խեցաքար—ракушечник
խղում—разрыв
խիտ—плотный

խոշրացրած—укрупненный
խորանարդ—куб, кубический
խորանարդիկ—кубик
խոնավություն—сыростъ
խոփ—крышка
խցին—пробка
ծածկ, ծածկային—кровля, кровельный
ծակառկեն—пористый
ծակառկենություն—пористость
ծավալային կշիռ—об'емный вес
ծինելույզ—дымовая труба
ծուլմ—изгиб
կամրջակալ—мостовой бык
կազմություն—структура
կայունություն—стойкость
կապակցող նյութեր—вязущие материалы
կառուցում—сооружение
կառուցվածքային—конструктивный
կարգ—категория
կարծրություն—твёрдость
կերամիկա—керамика
կրասական—прикладной
կոյուղի—канализация
կոմինդր—черепица
հագեցում—насыщение
հալոցային—плавильный
համագրել—сопоставить
հաշվիչ—счетчик
հատկություն—качество, свойство
հատովի—щтурчный
հատում—рез
հեղձուցիչ—удушливый
հիգրոսկոպիկ—гигроскопический
հղում—шлифовка
հողոց—топка
հողմանարում—выветривание
հովանարիչ—вентилятор

հումուր—сырье
հրաշյանություն—огнестойкость
ձագար—воронка
ձայնանցկություն—звукопроводность
ձգման ընդդիմադրություն—сопротивление растяжению
ձգում—растяжение
ձևափոխում—деформация
ձապուռ—захватка
ձատարապետական զարդարանք—архитектурное украшение
ձենապակի—фарфор
ձիգ—усилие
ձղում—скалывание
ձնում—сжатие
մազականություն—волюнтаризм
մածականություն—вязкость
մակերես—площадь, поверхность
մամուլ—пресс
մայթ—тротуар
մազգություն—изнашиваемость
մեկուսացում—изоляция
մեկուսիչ—изолационный
միատարր—однородный
միացություն—соединение
միջանցիկ—сквозной
միջնարկային—междуетажный
միջնապատճեն—перегородка
մշակման ընդունակություն—способность к обработке
յելանյութ—исходный материал
յերեսվածք—облицовка
ներարկում—внедрение
նուռ—образец
նորմավորում—нормировка
շաղան—раствор
շփում—трение
լուսնացություն—воздухопроводность
ուղաչոր—воздушинс-сухой
ուղափոխություն—вентиляция
ուժանդակ—вспомогательный
չափանիշ—измеритель
չափավորում—лозировка
պակասորդ—убыль
պահունի ամրություն—запас прочности
պիրոմետր—пирометр
պոմպ—пясос
ջերմանցկություն—темперопроводность
ջերմաստիճան—температура
ջերմություն—температура
ջերմունակություն—темперометрическость
ջրաշահական—водораспределительный
ջրանդեցում—водопоглощаемость
ջրանցկություն—водопроницаемость
սալ սալիկ—плита, плитка
սալահատակում—мощение
սայթուն—скользкий
սանդղակ—шкала
սարնակայուն—мерозостойкий
սկավառակ—диск
սնամեջ—пустотелый
փղորկում—полировка
փորմածք—кладка
տարբաւում—разложение
ցուցանիշ—показатель
փոխադրություն—транспорт
փորձարկում—испытание
փրփրաբետոն—пенообетон
քարհանք—каменоломия

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ

Առաջարան

Շին նյութերի վերաբերյալ գրական աղբյուրները	5
Ներածություն	7
Շինարարական նյութերի ահիճնիկական հատությունները	
1. Տեսակարար կախում	14
2. Մավալային կախում	16
3. Մակոտկենություն	22
4. Ջրահանգում	23
5. Ջրանցկություն	27
6. Ջերմանցկություն	29
7. Ջերմունակություն	38
8. Ջայնանցկություն	42
9. Ուժանցկություն	43
10. Նյութերի լայնացումը ջերմության ազդեցության տակ	46
11. Հրակայունություն	48
12. Դիմացկանություն	49
13. Ամրություն	57
ա. Ծնչման ընդլիմադրություն	58
բ. Զգման ընդլիմադրություն	62
գ. Ժուման յև հատման ընդլիմադրություն	66
14. Առաձգականություն	69
15. Կարծրություն	69
16. Մաշվարություն	71
17. Մշակման ընդունակությունը	76
18. Արտաքին տեսքը և վողորկման ընդունակությունը	77
19. Գրքում գործողրված տերմինների հայ-ռուսերեն բառարան	78



ՆԿԱՏՄԱՄ ՎՐԻՌԱԿԱՆԵՐ

Տերմին	Տարրած է մինչև	Գեղաց և մինչև
24	18	18
26	26	26
33	5	5
33	28	28
34	11	11
36	16	16
45	22	22
57	33	33
66	2	2
70	12	12

Տարրած է մինչև
18
26
5
28
11
16
22
33
2
12

Գեղաց և մինչև
18
26
5
28
11
16
22
33
2
12

28.212

ԳԻՆԸ 1 ՐՈՒԲԼԻ

ЦЕНА 1 РУБ.



Ա. ՄԱՆԱԴՅԱՆ

Свойства строительных
материалов